Երբ մենք մեր որդիների սառած մարմիններն էինք փնտրում, իշխանությունները գինու փառատոն ու ֆեստիվարներ էին կազմակերպում, զվարճանում էին, ուրախանում, երգում, պարում: Այս իշխանության ամեն ինչը կեղծ է, անգամ նրանց բերած խաղաղությունն է կեղծ, ոչ մի դեպքում նրանք չեն կարող մեր երկրին խաղաղություն բերել:

Կարդացեք՝ էջ 4

Ոչ մի թշնամական գործողություն, անգամ մտադրություն աննկատ չի մնում Քրիստինե Գրիգորյանի հիմնարկի ուշադրությունից, հաստատ նա ևս պարգևավճար ստացողների թվում է: Մնում է մի հարց պարզել. այս զեկույցը գրվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանի՞, թե՞ Նիկոլ Փաշինյանի աշխատասենյակում, թե՞ մեկը գրել է՝ մյուսը խմբագրել:

Կարդացեք՝ էջ 5

Եթե կառավարությանն ու Ռոմանոսին չհաջողվի մինչև ընտրություններ ՀԷՑ-ը վերադարձնել, նրանց շեֆը լրջագույն քարոզչական խնդիրների առջև է կանգնելու: Որ Հաքան Ֆիդանը Կայա Կալլասի ձեռքն էլ բռնած գա՝ չեն կարողանալու մեր հանրությանը համոզել, որ իրենք գող չեն, փիլիսոփա են: Թե դրանք ուր, փիլիսոփայությունն ուր:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 3 (4118), 22 հունվար, հինգշաբթի, 2026

www.hraparak.am



Օրերս տեղեկացանք, որ Ամենայն հայոց կաթողիկոսի հետաձգած Եպիսկոպոսաց ժողովը տեղի կունենա Ավստրիայի Սանկտ Փյոլթեն քաղաքում՝ փետրվարի 16-19-ը: Այս որոշումը վատ դրության մեջ է դրել իշխանություններին, որոշ տեղեկություններով՝ նրանք ուղիներ են փնտրում, փորձելով խոչընդոտել ժողովի իրականացումը, ինչպես դա եղավ անցած տարեվերջին, երբ դեկտեմբերի 10-12-ը հրավիրված Եպիսկոպոսաց ժողովը, որը պետք է քննարկեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ ստեղծված իրավիճակն ու վերջին զարգացումները, ավելի կոնկրետ՝ տասը տիրադավներին թեմական առաջնորդությունից զրկելու հարցը, հետաձգվեց: Մայր Աթոռը հայտարարեց, որ Եպիսկոպոսաց ժողովը ժամանակավորապես հետաձգվում է՝ պայմանավորված բռնաճնշումներով: Մեզ էլ տեղեկություններ էին հասել, որ ԱԱԾ-ի միջոցով են ճնշումներ գործադրվել՝ ընդհուպ Վեհափառին սպառնացել են, որ եթե ժողովը կայանա, Հայաստան ժամանած թեմական առաջնորդներն այլևս չեն կարողանա վերադառնալ իրենց թեմեր: Այդ օրերին գրեցինք նաև, որ խոչընդոտել էին վիրահայոց թեմի առաջնորդի՝ Հայաստան մուտքը, Բագրատաշենից նրան հետ ուղարկելով: Հիմա նոր ճնշումներ են սկսվել: Երեկ Փաշինյանի տիրադավների խորհուրդը կոչ արեց՝ չեղարկել Եպիսկոպոսաց ժողովը: Ուղիներ են որոնում, որ թույլ չտան հոգևորականների մեկնումը Հայաստանից:

ՔՊ-ական պատգամավոր, Առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահ Հռիփսիմե Հունանյանը երեկ հրաժարվեց պաշտոնից եւ հաջորդ խորհրդարանում առաջադրվելուց: Թեեւ նա իր հայտարարությամբ փորձեց տպավորություն թողնել, որ դա իր որոշումն է, սակայն իրականում Փաշինյանն է այդ որոշումը կայացրել: Նախօրեին պատգամավորուհին բերման է ենթարկվել ՔՊ վարչություն՝ դատափետվել իր սկանդալային հայտարարությունների համար: Նա երեկ առավոտից փակվել էր աշխատասենյակում, իսկ օրվա երկրորդ կեսին ինքնազգացողությունն այնքան էր վատացել, որ, գործընկերների պատմելով, շտապօգնության բրիգադ են կանչել խորհրդարան: Ասացին, որ տեւական ժամանակ խելքի չի եկել՝ դա է պատճառը, որ չի մասնակցում խորհրդարանում օրվա երկրորդ կեսին ընթացող ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին, որին Նիկոլ Փաշինյանն էր մասնակցում: Թե ով կփոխարինի նրան հանձնաժողովի պաշտոնում այս մի քանի ամիսը՝ մինչ խորհրդարանի արձակումը, երեկ անորոշ էր, չի բացառվում, որ տեղապահ նշանակվի Լուսինե Բաղալյանը, որը երեկ ողջունում էր Հունանյանի քայլը:

Մտրակ ու բլիթ

Կառավարվող, թե՞ անկառավարելի քաոս. ինչպե՞ս կարելի է բնորոշել այսօրվա իրավիճակը: Այն, ինչ մեր երկրում կատարվում է, մանրակրկիտ մտածված ծրագրի, հետեւողական քայլերի ու որեւէ կենտրոններում իրականացվող մշակումների արդյունք է, թե՞ ուղղակի ինքնահոսի մատնված եւ ազատ անկման սկզբունքով երկիրը գահավիժում է անհայտ ուղղությամբ: Ես կասկածներ ունեմ, որ շատ բան երկրում դարձել է անկառավարելի, եւ այս իշխանությունն այլեւս անծրագիր, սպոնտան եւ մոտավորապես գործող մի խմբակի է վերածվել, որի անելիքների մի մասը դրսում է որոշվում, մյուս մասը՝ ով պատահի: Օրինակ, վստահ չեմ, թե Նիկոլ Փաշինյանի հակաեկեղեցական ծրագրի հիմքում որեւէ տրամաբանություն ու հաշվարկ կա: Կամ՝ վստահ չեմ, որ ոստիկանության, քննչականի եւ ԱԱԾ-ի բոլոր գործողությունները կառավարությունից են համակարգվում: Տպավորություն ունեմ, որ ՆԳ նախարարը, ԱԱԾ տնօրենը, դատախազը, քննիչ-ոստիկանները հաճախ ինքնագլուխ եւ խարխափելով են գործում: Նրանց մոտ սկսել է ինքնապաշտպանության բնազդն աշխատել, որովհետեւ բոլորն այնպես են ապականվել ու օրենքի, Սահմանադրության համատարած ոտնահարումներին մեղսակից դարձել, որ գիտակցում են՝ իշխանափոխության պարագայում իրենցից ոչ մեկին չկա փրկություն: Եվ անգամ այդ շռայլ հավելավճարներն էլ են խոսում այն մասին, որ ապարատը «փախչում է» առաջնորդի տակից, եւ նա «մտրակի ու բլիթի» սկզբունքով մի կերպ փորձում է պահել համակարգը, որ չփլուզվի: Մեկին՝ պատժվելու վախը, մյուսին՝ բարձր աշխատավարձը, երրորդին՝ որեւէ այլ ճամբարում հանգրվանելու անհնարինությունը ստիպում են, որ մնան իր կողքին, աջակցեն իր վերարտադրությանը, ըստ այդմ՝ իրենց շարունակականությանը: Համակարգերը դեռ գործում են, բայց ներքին դժգոհությունն ահռելի չափերի է հասել:

Իշխանական քարոզչամեքենան օրեր շարունակ լծված է «Մեր ձեւով» շարժումը վարկաբեկելու, ծաղրելու գործին, եւ հատկապես նրանց տնտեսական ծրագիրն են տարբեր ֆեյք-էջերով քլնգում: Երեկ պարզվեց, որ ՔՊ-ն այնքան է հուզվել, իրենց բնորոշմամբ՝ «մանկապատանեկան հանդես» կոչված այդ միջոցառումից, որ «մանկապատանեկան խմբակի» թելադրած օրակարգը քննարկում են նաեւ ԱԺ-ում: Երեկ կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ՔՊ դիջեյը՝ Էդուարդ Աղաջանյանը, հեգնեց Նարեկ Կարապետյանին, առանց անունը նշելու, Փաշինյանին հարցրեց. «Ինչո՞ւ Դուք անվճար չեք աշխատում՝ որպես վարչապետ, արդեն 8 տարի, ե՞րբ եք հրաժարվելու Ձեր աշխատավարձից»: Հիշեցնենք. Կարապետյանը հայտարարել է, որ իրենց վարչապետը սիմվոլիկ 1 դրամ աշխատավարձ է ստանալու: Փաշինյանը հերթական պոպուլիստական պատասխանը տվեց. «Նրանք, որոնք առանց աշխատավարձի կամ սիմվոլիկ աշխատավարձով աշխատել են վարչապետ կամ չգիտեմ ինչ, հիմա նրանք դոլարային միլիոնատերեր են: Ես նման խնդիր չունեմ իմ առաջ դրած»: Իր խնդիրը բյուջեից ստացած աշխատավարձով միլիարդատեր դառնալն է. վերջին շռայլ վարձատրությունը դրա մասին է վկայում:

ԶԲԱՂՎԱԾ ԵՆ ԻՐԱՐ ԽՈՐՏԱԿԵԼՈՎ

ՔՊ խմբակցությունում վերջին ժամանակներն անառողջ մթնոլորտ է տիրում, մեր աղբյուրները պատմում են, որ բոլորը բոլորի դեմ են գործում, ով ում կարողանում, մրոտում է կուսակցական հավաքների ժամանակ, ամեն մեկը փորձում է իր թիկունքին հրեշտակի թեւեր դնել, իսկ դիմացինին՝ սատանա ներկայացնել: Փետրվարին ՔՊ համաժողովում պետք է նախընտրական ցուցակը ձեւավորվի՝ առաջարկվող 280 անունից պետք է 50-ին ընտրեն, որոնք ցուցակի առաջին մասում կլինեն, ուստի յուրաքանչյուրը կարծում է, որ դաժան պայքարով պետք է հարթի իր ճանապարհը, որ թիմում դիրքային առավելություն ունենա մյուսների նկատմամբ եւ հնարավորինս բարձր հորիզոնականներում տեղ զբաղեցնի: ՔՊ-ից մեր զրուցակիցը պատմեց, որ անգամ վախենում են խոսել մեկը մյուսի հետ, որ շառից-փորձանքից հեռու մնան: Ի դեպ, խմբակցությունը մեկուսացրել է պատգամավոր Հայկ Սարգսյանին՝ գրեթե բոլորը նրա նկատմամբ ագրեսիվ են տրամադրված եւ թույն են շնչում նրա հանդեպ, քանի որ նա կորցրել է Փաշինյանի վստահությունը:

ԱԺ

ԲԼԹԱՑՆՈՒՄ ԵՆ ՇԱՏԵՐԸ, ՊԱՏԺՎՈՒՄ Է ՄԵԿԸ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ առողջապահության հանձնաժողովի արդեն նախկին նախագահ Հռիփսիմե Հունանյանը երեկ առավոտյան ֆեյսբուքյան իր էջով անսպասելի հայտարարեց, որ հրաժարականի դիմում է ներկայացնում ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից, ինչպես նաեւ՝ ինքնաբացարկ է հայտնում առաջիկա խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվելուց:

Հռիփսիմե Հունանյանն ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էր ընտրվել 2025-ի հոկտեմբերին: «Վերջին շրջանում Ազգային ժողովում հնչեցրած իմ որոշ մտքեր քննադատության արժանացան մեր մի շարք քաղաքացիների կողմից: Նախ, թույլ տվեք ներողություն խնդրել իմ այն ձեւակերպումների համար, որոնք այս կամ այն կերպ առաջացրել են մեր սիրելի քաղաքացիների զայրույթն ու դժգոհությունը: Անշուշտ, հրապարակային խոսքը քաղաքական գործունեության անբաժան մասն է, եւ երբեմն անհնար է խուսափել բանավոր խոսքի ժամանակ տեղ գտած վրիպումներից: Սխալվել կարող են բոլորը, իսկ առերեսվել սխալների հետ եւ ուղղել դրանք՝ պարտավոր են անել առաջին հերթին հանրային առաջնորդություն ստանձնած մարդիկ՝ օրինակ ծառայելով բոլորի համար»,- պարզաբանել է իշխանական պատգամավորը:

Խորհրդարանի անդիպլոմ պատգամավորներից Հռիփսիմե Հունանյանը բազմիցս է աչքի ընկել աղմկահարույց հայտարարություններով, որոնք բուռն քննարկվել են հանրության շրջանում, վերջին նմանօրինակ հայտարարությունը երկու օր առաջ էր, խորհրդարանում քննարկման ժամանակ նա հայտարարել էր, թե «մեր պետությանը միայն զինվորներ պետք չեն, մեր պետությանը նաեւ պետք են գլուխներ, որոնք կօգնեն պետության տարբեր ճյուղերի զարգացմանը»: Այս արտահայտությունը, իհարկե, ավելի քիչ քննարկվեց, քան նրա նախորդ հայտարարությունները, սակայն Փաշինյանի համար առիթ դարձավ, որ ընտրությունների շեմին լուծի Հռիփսիմե Հունանյանի հարցերը՝ կարծելով, որ նա «խայտառակում է ռեսպուբլիկա», եւ նրա նմանների պատճառով է ՔՊ-ն վարկանիշ կորցնում: Նախօրեին Հունանյանին ՔՊ վարչություն են կանչել եւ մեղադրյալի աթոռին նստեցնելով՝ խարազանել: Հիշել են բոլոր հին ու նոր «մեռելներին», բոլոր աղմկոտ հայտարարությունները եւ պատգամավորից բացատրություն են պահանջել՝ հատուկ է անում, որ ՔՊ-ին թիրախավորեն, քացու տակ գցեն իր ասածների համար: Կարելի է կարծել, որ Հռիփսիմե Հունանյանը ՔՊ-ի միակ բլթացնողն է, մնացած բոլորը փորձառու եւ ճարտար քաղաքական գործիչներ են, որոնք կշռադատված խոսք ունեն, հաշիվ են տալիս իրենց ասած- արածների համար, հազար չափում՝ նոր խոսում ու երբեւէ նման կիքսեր թույլ չեն տվել: Օրինակ, ընդդիմադիր գործչին տեսախցիկների առջեւ չեն ասել՝ լեզուդ, ականջներդ կկտրեմ, ինչպես Արթուր Հովհաննիսյանը՝ Էդգար Ղազարյանին, կամ՝ չեն թքել մարդկանց երեսին, նախապես թիկնապահներով ձեռքերը բռնելուց հետո, ինչպես Ալեն Սիմոնյանը: Սրբազանների հասցեին ամենավերջին փողոցայինի պես չեն խոսել, «դոմփել» բառը չեն օգտագործել ու չեն առաջարկել կաթողիկոսին՝ ստուգել սեփական առնանդամը, ինչպես Նիկոլ Փաշինյանը: Այս ամենի մոտ Հռիփսիմե Հունանյանի արածները, իհարկե, անմեղ կատակներ են:

Բայց ՔՊ-ում քավության նոխազներ են փնտրում եւ Հունանյանին կանչել են «կառափնարան», «շան լափ թափել գլխին» եւ հասկացրել, որ շանս չունի ոչ պաշտոնում մնալու, ոչ՝ ցուցակում: ՔՊ-ում եւս շոկի են ենթարկվել՝ իմանալով Հունանյանի «դատավճռի» մասին, կուլիսներում խոսում էին, որ Փաշինյանն իրականում Հունանյանից ազատվում է ոչ թե իր արտահայտությունների համար, այլ այն պատճառով, որ Հունանյանն այնքան էլ կառավարելի ու կանխատեսելի չէ: Այս որակների համար էլ ՔՊ խմբակցությունում նրան հարգում են եւ անցած հոկտեմբերին ընտրեցին հանձնաժողովի նախագահի պաշտոնում, չնայած առաջադրվել էր նաեւ ՔՊ հնաբնակներից մեկը՝ Զարուհի Բաթոյանը: Իսկ Փաշինյանին պետք են առանց որեւէ ֆանտազիայի իր հրամանները ստրուկի պես կատարող մարդիկ:

Փաստորեն, ԱԺ առողջապահության հանձնաժողովի վրա նախագահ չի գալիս. նախորդ նախագահին՝ Նարեկ Զեյնալյանին նույնպես Փաշինյանը sms-ով ազատեց պաշտոնից եւ զրկեց մանդատից: Հիմա Հունանյանի հերթն էր: Երեկ նա փակվել էր խորհրդարանի իր աշխատասենյակում եւ հրաժարվում էր մեկնաբանություններ տալ լրագրողներին: Նրա մոտ ելումուտ էին անում որոշ գործընկերներ, հավանաբար, մխիթարում էին նրան, պատգամավորն անգամ չմասնակցեց կառավարության հետ հարցուպատասխանին: ՔՊ-ական այլ պատգամավորներ էլ էին հրաժարվում մեկնաբանել կատարվածը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆ ՏԱԿ՝ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՇԱՌՔ

Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը մամուլի ասուլիսի ժամանակ սենսացիոն բացահայտում արեց: Փաստորեն, այն աստղաբաշխական պարգեւատրումները, որոնք իշխանության վերին էշելոնը ստացել է 2025-ի վերջին, ոչ թե պարգեւատրումներ էին, այլ հավելյալ աշխատավարձ, որը նրանք այսուհետ ստանալու են:

Այնպես որ, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի սպառնալիքը, թե «էլի են ստանալու՝ իրենց հասանելիքն է», շուտով իրականություն է դառնալու: 8-9 մլրդ դրամը, որ բաժանվեց ՔՊ-ականներին՝ հանրային գրպանից, 25 թ. առաջին կիսամյակի համար էր, շուտով նրանք 2-րդ կիսամյակի փողն էլ կստանան՝ նույն քանակի:

Պատասխանելով «Սիվիլնեթի» հարցին, թե որ նվաճումների համար են ստանում 13, 14-րդ աշխատավարձ, պարգեւավճարներ, եւ ինչպիսին է իր վերաբերմունքը վերջին պարգեւատրումների հարցում, ֆինանսների նախարարն ասել է, որ եղել են քննարկումներ պետական պաշտոնյաների աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ: «Այս քննարկումների ժամանակ իմ դիրքորոշումը եղել է այն, որ ուղղակի բարձրացնել նախարարների, փոխնախարարների եւ ղեկավարների աշխատավարձը՝ երեւի այնքան էլ ճիշտ չի, պետք է ներդնել մի համակարգ, որտեղ առնվազն կկարողանանք որոշակի թիրախներ դնել եւ այդ թիրախների գնահատման արդյունքով տրամադրել, այսինքն, այդ աշխատավարձի բարձրացումը լինի ոչ բոլորի համար նույն ձեւով: Ովքեր ունենան ավելի լավ կատարողական, նրանց համար մի փոքր ավելի կլինի, մյուսների համար՝ մի փոքր պակաս: Այս համակարգը պիլոտային կարգով մենք ներդրեցինք անցյալ տարվա սկզբից, այսինքն, սահմանվեցին թիրախային նպատակներ տարբեր գերատեսչությունների համար, եւ հետո տարվա կեսում դրա վերաբերյալ եղավ գնահատման պրոցես, թե ինչքանով են դրանք կատարվել»:

Նախարարը շատ լավ հասկանում է, որ այս համակարգը ՀՀ քաղաքացիների զայրույթն է առաջացնելու, բայց, ախր՝ «Պետական բարձրաստիճան պաշտոնյաները, ովքեր լարված, ստրեսային աշխատանքով են զբաղված, առնվազն պետք է որոշակի սոցիալական խնդիրների մասին ամեն օր չմտածեն, որպեսզի կարողանան կատարել իրենց աշխատանքը կատարելության հասնելու հանձնառությունը: Այո, դա ցավոտ է, այո, կարելի է շահարկել, բայց թափանցիկությունը եւ հաշվետվողականությունը այն քաղաքականությունն է, որ մենք որդեգրել ենք»,- հայտարարեց նա: Հավանաբար, թափանցիկություն ասելով նկատի ուներ այն, որ ՔՊ-ական պաշտոնյաներին վարձատրելու որոշումներն ընդունվում են հանրությունից թաքուն, չզեկուցվող որոշումներով:

Հիշեցնենք, որ ասուլիսի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ մեկուկես միլիոն դրամ աշխատավարձի հավելում է ինքը ստացել: Մեր տեղեկություններով, այն միլիարդները, որ ՔՊ-ականները ստացել են, ընդամենը

2025 թ. առաջին կիսամյակի աշխատավարձն էր, մի հսկայական գումար էլ նրանք ստանալու են երկրորդ կիսամյակի համար: Սրա անունը կարելի է դնել պիլոտային ծրագիր կամ փորձարկում՝ հանրության զայրույթի չափը որոշելու համար, սակայն բոլորիս հասկանալի է, որ հավելյալ աշխատավարձ ասվածն իրականում նախընտրական կաշառք է, որը ՔՊ-ն տալիս է ապարատին, պետական ծառայողներին, պատգամավորներին՝ նրանց բարեհաճությունը եւ ծառայություններն ընտրությունների ժամանակ վայելելու համար:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

8 միլիոն՝ վերանորոգված սենյակի վերանորոգման համար

Սոցիալական աղետալի վիճակն էլ ավելի խորացնող իշխանությունները եւ, ըստ էության, նրանց կցված մարմինները շարունակում են պետական բյուջեն աննպատակ ծախսել: Այս անգամ հերթը Բարձրագույն դատական խորհրդինն է, որի նախագահը ՔՊ-ական իջեւանցի պատգամավոր Վահե Ղալումյանի հորաքրոջ որդի Արթուր Աթաբեկյանն է: Մեծ, լուսավոր եւ նորակառույց շենքում են աշխատում ԲԴԽ անդամները՝ համալրված անհրաժեշտ գույքով, տեխնիկայով: Մեկ անգամ այդ շենքում եղած մարդը կարող է փաստել՝ լավ աշխատանքային պայմաններն ապահովված են: Բայց, չգիտես ինչու, ԲԴԽ նախագահը որոշել է վերանորոգել առաջին հարկի վերանորոգված մեծ դահլիճը, որտեղ հանդիպումներ են տեղի ունենում, եւ որտեղից մի ժամանակ՝ նիստերի օրերին, լրագրողներն առցանց հետեւում էին ԲԴԽ նիստերի ընթացքին:

Բարձրագույն դատական խորհրդի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանին հարցրինք՝ ինչո՞ւ է վերանորոգվում այդ դահլիճը, եւ որքա՞ն գումար է հատկացվել դրա համար: Նա մեզ պատասխանեց, որ, նախ, գումարը հատկացվել է պահուստային ֆոնդից, ապա նշեց. «Միջազգային գործընկերների, բարձրաստիճան պատվիրակությունների ընդունելությունների, ներկայացուցչական հանդիպումների, մեծաքանակ քննարկումների կազմակերպման համար ԲԴԽ-ի կողմից որոշվել է վերանորոգել այդ սրահը, որպեսզի ունենանք արդի պահանջներին համապատասխան ներկայացուցչական կոնֆերանս սրահ: Սրահի ընթացիկ նորոգման ծախսերը կազմելու են շուրջ 8,0 մլն ՀՀ դրամ, իսկ դրա ֆինանսական միջոցները հատկացվելու են Բարձրագույն դատական խորհրդին եւ դատարաններին «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Դատական իշխանության գործունեության ապահովում եւ իրականացում» 1080 ծրագրի «Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում եւ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում» 11001 միջոցառման տնտեսագիտական դասակարգման «Շենքերի եւ կառույցների ընթացիկ նորոգում եւ պահպանում» 4251 հոդվածից»:

Ըստ խոսնակի՝ դահլիճը փոխում է իր նշանակությունը: Մեր այն հարցին, թե մինչ այդ նման հանդիպումները որտեղ են անցկացվել, նշեց՝ հիմնականում խորհրդակցական սենյակում, որը բավական փոքր է. «Դրանում կարող եք համոզվել մեր պաշտոնական կայքում տեղադրված լուսանկարներից»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՎ ՍՏԻՊՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՆՑՆԵՆՔ ՆԻԿՈԼԻ ԿՈՂՄԸ

- Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը՝ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ եւ դատարանի վճռով, շարունակում է զբաղեցնել թեմի առաջնորդի պաշտոնը: Իշխանություններին ենթակա դատարանը հաշված ժամերի ընթացքում տիրադավ առաջնորդին իր պաշտոնում վերականգնեց, այն դեպքում, երբ եկեղեցական որոշումներին դատարանը չի կարող միջամտել: Տեղեկություններ կան, որ այդ պաշտոնում վերականգնվելուց հետո Գեւորգ Սարոյանը «տեռոր» է սկսել թեմի ներսում, եւ արդեն քանի օր է՝ լարված մթնոլորտը չի հանդարտվում: Ի՞նչ իրավիճակ է այժմ:

- Իրավիճակը խիստ անհանգստացնող եւ մտահոգիչ է, որովհետեւ կան բռնաճնշումներ՝ հոգեբանական իմաստով եւ ոչ միայն: Անգամ ֆիզիկական հաշվեհարդարների սպառնալիքներ կան, ատելության գեներացում՝ առ այն բոլոր հոգեւորականներին, ովքեր չեն միաբանվում Նիկոլ Փաշինյանի կողմից Եկեղեցին «բարեկարգելու» կեղծ օրակարգին: Անգամ քահանաներից շատերն այս օրերին վախենում են իրենց ընտանիքի անդամներին տանը մենակ թողնել, մտածելով, որ ընտանիքի անդամներին վախեցնելով, վնասելով՝ կարող են ինչ-որ գործողություններ կատարել: Այժմ ճնշումներ կան, միանշանակ, եւ այդ ամենն արվում է պետական լծակներով՝ Փաշինյանի օժանդակությամբ, տեղական ինքնակառավարման մարմիններ, թաղային հեղինակություններ, ոստիկանական ուժեր, հատուկ ծառայություններ եւ այլն: Մարդկանց շանտաժով, խոստումներով փորձում են ազդեցություն ունենալ: Ամեն բան անում են, որ քահանաները միանան իրենց պիղծ ընթացքին, սակայն, փառք Աստծո, քահանաներն ամուր կանգնած են իրենց տեղում եւ լավ հասկանում են, որ տեղի ունեցող պրոցեսները մտացածին են եւ ոչ մի ազնիվ նպատակ չունեն: Ես զարմանում եմ մեր իրավապաշտպան կազմակերպությունների արձագանքի, ավելի ճիշտ՝ չարձագանքի վրա, որ առհասարակ ոչ մի խոսք չեն ասում շատերը: Մարդու իրավունքների կոպտագույն խախտումներ են տեղի ունենում, բոլոր հնարավոր ձեւերով իշխանությունն իր ունեցած ռեսուրսներով լծվել է հոգեւորականներին ճնշելու գործին, իսկ ո՞ւր մնաց ժողովրդավարությունը: Եթե հոգեւորականին ստիպում են ընդունել այս կամ այն առաջնորդին, դա արդեն իսկ մարդու իրավունքների կոպտագույն խախտում է: Ինչ վերաբերում է թեմի նախկին առաջնորդին, որին դատարանը վերականգնել է իր պաշտոնում, ապա դատարանը չի կարող նման որոշումներ կայացնել: Դատարանը չի կարող եկեղեցու ներսում թեմի առաջնորդ նշանակել:

- Ձեր խոսքում ասացիք, որ բանը հասել է ֆիզիկական հաշվեհարդարների սպառնալիքներին, որ շատ հոգեւորականներ վախենում են իրենց ընտանիքի անդամներին տանը մենակ թողնել եւ այլն: Խնդրեմ, ավելի մանրամասն խոսեք այս մասին, ինչ կոնկրետ դեպքեր գիտեք:

- Կան սպառնալիքներ, չեմ կարող անուններ տալ, որովհետեւ, եթե տամ նրանց անունները, հերթական անգամ վտանգի տակ կդնեմ նրանց: Քանի դեռ չի ստեղծվել համապատասխան միջավայր, որտեղ մենք կարող ենք ազատ խոսք ասել, պետք է զգուշանալ: Եթե հիմա կոնկրետ փաստեր ասեմ, վաղը նրանց հետ ինչ-որ մի դժբախտ պատահար կարող է տեղի ունենալ….

- Իսկ ի՞նչ սպառնալիքներ կան կոնկրետ:

- Սպառնում են, որ եթե Նիկոլի կողմը չանցնեն, դուրս կվռնդվեն, եւ շատ ավելի վատ սպառնալիքներ: Սա պղծության գագաթնակետն է, թող վախենան Աստծո դատաստանից, որը չի ուշանալու, պատժվելու են թե՛ իրենք, թե՛ իրենց սերունդները:

- Այսօր տիրադավների խումբը հայտարարություն է տարածել՝ պահանջելով չեղարկել Ավստրիայում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովը:

- Նման պահանջ ներկայացնելու իրավունք ոչ ոք չունի: Դե եթե այդպես է, ես էլ պահանջում եմ, որ իրենք չշնչեն, այլ միայն արտաշնչեն: Պարզ է, թե այդ քամիները որտեղից են փչում: Ովքե՞ր են նրանք, որ նման բան կարողանան պահանջել: Սա իրենց համար կոլխոզի ժողով չէ, որ ամեն մեկն իր տեղից մի բան ասի, կա ավանդություն, կա ընթացակարգ, դարերով ձեւավորված մշակույթ: Հասկացանք, Նիկոլը նրանց հովանավորում է ամեն ձեւով, կանաչ լույս է վառում ամեն տեղ, ասում է՝ ինչ ուզում եք, արեք, ես աչք եմ փակելու, իրավապահներին էլ հրահանգել են սատարել նրանց ամեն կերպ, սրանք էլ ինչ ուզում են, խոսում են: Եհովայի վկաները ինձ դատի էին տվել, մի տարի դատարաններում քարշ էի գալիս, Եհովայի վկաների իրավունքները Հայաստանում այնքան պաշտպանված են, որ դատական նիստերին Հայաստանում ԱՄՆ դեսպանատնից ներկայացուցիչներ էին գալիս՝ թարգմանիչներով, Հելսինկյան գրասենյակից էին ներկայացուցիչներ գալիս, չգիտես էլ որտեղից: Հիմա ո՞ւր են նրանք, ինչո՞ւ չեն կանգնում մեր կրոնական իրավունքների կողքին, ինչո՞ւ մեկ տող անգամ չեն ասում մեր մասին:

- Թեմի առաջնորդի հետ կապված այս խառնաշփոթի հանգուցալուծումն ինչպե՞ս եք տեսնում:

- Այս օրերում «հանգուցալուծում» բառին պետք է վերապահումներով մոտենալ: Տիրող մթնոլորտում, երբ իշխանությունները եկեղեցականների դեմ ատելության, բռնության բացահայտ կոչեր են անում, «հանգուցալուծում» ասվածը նախ այս իրավիճակի դադարեցումը պետք է լինի, որից հետո Եկեղեցին կլուծի իր հարցերը՝ ներսում: Մենք ունենք իրավունք՝ մեր պետության իշխանավորին այս կամ այն թերացման համար դիտողություն անելու, որովհետեւ Սահմանադրությունը մեզ տալիս է այդ իրավունքը, իսկ իշխանությունները չունեն իրավունք՝ մտնելու Եկեղեցու ներքին կառավարման հարցերի մեջ: Մենք նույն հարթության վրա չենք: Այդ տիրադավներն այնտեղ տարբեր պատճառներով են հայտնվել. մեկը՝ իր մեղքերի արդյունքում, մեկը՝ կաշառքի, ինչպե՞ս են համարձակվում Եկեղեցուն մեղադրել: Եկեղեցին ամենապետականակենտրոն կառույցն է եղել, կա եւ կմնա: Եկեղեցին պետության դեմ չէ, այլ պետությունը սխալ կառավարողների եւ կործանողների: Առավոտից երեկո Վեհափառին գործակալ են անվանում, իսկ որտե՞ղ են փաստերը: Քրեական օրենսգրքում կա համապատասխան հոդված, որտե՞ղ մնացին փաստերը: Մի թղթի կտոր են գցել հրապարակ, իսկ որտե՞ղ է ապացուցվում դրա իրական լինելը: Ամեն օր օրենքը, մարդասիրությունը, միջազգային իրավունքները Հայաստանում բռնաբարվում են՝ ամեն առումով: Ի՞նչ է անում միջազգային հանրությունը, ջայլամի քաղաքականություն է վարում, չի միջամտում այս խայտառակությանը: Մեզ ասում են՝ ապացուցեք, որ Վեհափառն անմեղ է, ինչո՞ւ պետք է մենք ամեն մի հիմարություն մեկնաբանենք: Ես իմ քահանա եղբայրներին խնդրանք ու հորդոր ունեմ՝ մնացեք հաստատուն, ոչ մի շանտաժի մի ենթարկվեք, ոչ մի խոստման մի հավատացեք: Իսկ նրանք, ովքեր անցել են հակառակ ճամբար, ճիշտ կանեն՝ դարձի գան:

*«Հրապարակի» զրուցակիցը Մասյացոտնի թեմի քահանա **Զարեհ Աշուրյանն** է:*

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆԸ 2 ԱՄՍՈՒՄ ՊԵՏՔ Է ՈՐՈՇԻ՝ ԼԻՑԵՆԶԻԱՅԻՑ ԶՐԿԵԼՆ ՕՐԻՆԱԿԱ՞Ն ԷՐ, ԹԵ՞ ՈՉ

ՀՀ վարչական դատարանում մեկ շաբաթ առաջ սկսվել է «Տաշիր կապիտալ» ընկերության հայցի քննությունը, որով ընկերությունը վիճարկում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կառավարման լիցենզիայից զրկելու որոշումը: Ըստ հայցվոր կողմի՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումները՝ լիցենզիան հետ կանչելու եւ ժամանակավոր պետական կառավարիչ նշանակելու մասին, ընդունվել են առանց համապատասխան փաստական հիմքերի եւ գործի հանգամանքների սխալ մեկնաբանմամբ: Հիշեցնենք. Ազգային ժողովը 2025 թվականի հուլիսի 3-ին 65 կողմ, 27 դեմ, 0 ձեռնպահ ձայներով երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» եւ «Էներգետիկայի մասին» օրենքներում նախատեսված փոփոխությունների եւ լրացումների փաթեթը, այլ կերպ ասած՝ ՀԷՑ-ի պետականացման նախագիծը: Հուլիսի 18-ին հայտնի դարձավ, որ ՀԾԿՀ-ն Պետական վերահսկողության ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանին նշանակել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության ժամանակավոր կառավարիչ: Հանձնաժողովը նաեւ կառավարության ներկայացրած հաղորդման հիմքով վարույթ է հարուցել ՀԷՑ-ի նկատմամբ: Նոյեմբերի 17-ին ՀԾԿՀ-ն դադարեցրեց ՀԷՑ-ի՝«Տաշիր կապիտալ» ընկերությանը տրված լիցենզիան: Նշենք, որ «Տաշիր խմբի» ընկերությունների նախագահ Սամվել Կարապետյանն այս ընկերությունը ձեռք է բերել 2016 թվականին՝նախկին կառավարության խնդրանքով, եւ հարյուր միլիոնավոր դոլարներ է ներդրել ցանցի արդիականացման համար:

Դատարանում «Տաշիր կապիտալ»-ի շահերը ներկայացնում է հայտնի փաստաբան, արդարադատության նախկին փոխնախարար **Արամ Օրբելյանը**: Նա «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց՝ քանի որ լիցենզիայից զրկելու վարույթ է, ապա օրենքն ավելի սեղմ ժամկետներ է սահմանել գործի քննության համար. «Այն պետք է քննվի 2 ամսվա ընթացքում, 2 նիստ արդեն եղել է, եւ հաջորդ նիստին դատարանը դատաքննության անցնելու որոշում է տալու»:

- Անցած կիրակի մենք տեսանք, որ ՀԾԿՀ նախագահ Մեսրոպ Մեսրոպյանը ներկա է այն պատարագին, որի մասնակցում է Նիկոլ Փաշինյանը: Ըստ էության, նա կիսում է իշխանության համոզմունքներն ու գաղափարները եւ չի կարող Հանձնաժողովի անկախ նախագահ ընկալվել: Սրա մասին դատարանում բարձրաձայնվե՞լ եք:

- Մեր արգումենտներից մեկը վերաբերում է նրան, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կազմը, ընդ որում, ոչ միայն Մեսրոպյանի մասով, այլ նաեւ մյուս այլ անդամների մասով, բացարկման ենթական անդամներ կան: Տպավորությունն այն չէ, որ կողմնակալ որոշում են ընդունել: Բայց մենք հիմնավորված եւ ուղղակի կողմնակալության մասին ենք բարձրաձայնում: Իրականում այնտեղ լրջագույն խնդիրներ կային՝ ՀԾԿՀ վարույթի վերաբերյալ, իրականում բարդ հարց է, բայց մի շարք խնդիրներ կան՝ եւ ՀԾԿՀ-ի վարույթի հետ կապված, եւ վարույթին նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցող գործընթացների հետ կապված, այդ թվում՝ նաեւ հստակ հրապարակային ելույթների, որտեղ հստակ արձանագրվել է, որ ՀԷՑ-ի ազգայնացումը պետք է ավարտին հասցվի: Ըստ էության, նախորդող գործընթաց, հաջորդող գործընթաց, այս գործընթացում ՀԾԿՀ նախագահի լիազորությունների սահմանման հետ կապված հարցեր կան, այսինքն՝ որտեղ է ավարտվում նրա իրավունքը, օրինակ՝ վարույթի հարուցման, եւ որտեղ է որ ինքը՝ ուզի-չուզի, վարույթ պետք է հարուցի: Այստեղ հարցերը բազմաշերտ են, հայցը ներկայացրել ենք, հայցադիմումում այդ հիմքերը կան, այդ թվում՝ նաեւ ՀԾԿՀ-ի որոշումն ընդունած կազմի, օրենքի իմաստով, անկախության:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԵՐԲ ԵՍ ԻՄ ՈՐԴՈՒ ՍԱՌԱԾ ՄԱՐՄԻՆՆ ԷԻ ՓՆՏՐՈՒՄ, ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆՈՒ ՓԱՌԱՏՈՆ ԷՐ ԱՆՈՒՄ

Հունվարի 27-ը որպես հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր սահմանելու հարցի շուրջ ընդդիմությունն ու իշխանությունն այդպես էլ համաձայնության չեկան: Նախագծի հեղինակ՝ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանն ասաց. «Մենք ուզում ենք սահմանել օր, երբ որ ՔՊ-ականը կխոնարհվի հայրենիքի պաշտպանության համար զոհված դաշնակցականի շիրիմի առաջ, դաշնակցականը կխոնարհվի հայրենիքի համար զոհված ՔՊ-ականի շիրիմի առաջ, եւ այսպես շարունակ», սակայն ընդդիմությունն անընդունելի համարեց օրվա ընտրությունը՝ Բանակի օրվա՝ հունվարի 28-ի նախորդ օրը, եւ դեմ քվեարկեց: Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը հունվարի 27-ը հայրենիքի համար զոհվածների հիշատակի օր սահմանելը ճիշտ չի համարում: Նրա համոզմամբ՝ այդկերպ իշխանությունը թիրախավորում է Բանակի օրը՝ հունվարի 28-ը. «Այնուամենայնիվ, ենթատեքստը թիրախն է հայոց բանակի: «Զոհ» բառը զուգակցվում է բանակի հետ: Ավելի շատ փիառ ակցիա է»: ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանն արձագանքեց. «Ես իրոք չեմ հասկանում. ասում եք՝ թիրախը բանակն է, ինչո՞վ է թիրախը բանակը: Պարոն Մինասյան, հայրենիքի պաշտպանության համար զոհվածների գերակշիռ մեծամասնությունը հայրենիքի պաշտպանության համար զովել է բանակում, ակնհայտ է, չէ՞, այդ կապը, ես իրոք չեմ հասկանում՝ ինչն է փիառ ակցիա: Այսքան զոհեր ենք ունեցել, վերջապես խաղաղություն է հաստատվել, վերջապես շունչ քաշելու ժամանակ ունենք, ու ես կարծում եմ՝ դա ամենաքիչն է, ինչ կարող ենք անել՝ նման օր սահմանելը, մեր զոհերի հիշատակը հարգելու համար»: Դաշնակցական պատգամավորը կարծում է, որ իշխանությանը ոչինչ չէր խանգարում ընդդիմության հետ համաձայնությամբ ընտրել հիշատակի օրը: Մինասյանը հիշեցրեց, որ մինչեւ 2-րդ ընթերցմամբ քննարկումը Ռուբինյանն առաջարկել էր հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր սահմանել Խաչվերաց տոնին հաջորդող օրը, ինչն ընդունելի է եղել ընդդիմության համար, սակայն իշխող ՔՊ-ն հետո դեմ է արտահայտվել այդ առաջարկին եւ հիշատակի օր սահմանել հունվարի 27-ը:

«Կա մի խմբի կողմից պարտադրանք, հետեւաբար՝ մեր խմբակցությունն այս վարքագծին դեմ է քվեարկելու, ոչ թե հիշատակմանը»,- ասաց Արծվիկ Մինասյանը: Ռուբինյանը բացատրեց՝ իշխանությունն ընտրել է հիշատակի այնպիսի օր, որը կապված չէ կոնկրետ ռազմական իրադարձության հետ, իսկ Խաչվերաց տոնին հաջորդող օրվան ՔՊ-ն դեմ է եղել, որովհետեւ այդ օրը շարժական է, եւ հետո՝ Խաչվերացին հաջորդող մեռելոցի օրը հիշատակի օր է բոլոր ննջեցյալների համար, ոչ կոնկրետ հայրենիքի պաշտպանության համար զոհվածների: «Ինձ դուր է գալիս՝ ինչպես է Գեղամ Նազարյանը ձեւակերպում. առաջին օրը կհիշենք մեր երկնային բանակը, հաջորդ օրը՝ մեր երկրային բանակը»,- ասաց Ռուբինյանը:

Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Ժիրայր Մարգարյանի մայրը՝ **Նաիրա Մարգարյանն** այս մասին ասում է. «Հունվարի 27-ը սգո օր սահմանելն իշխանության համար ձեւական մի բան է: Հա, գուցե նրանք նաեւ ինչ-որ միջոցառումների էլ են մասնակցում, Փաշինյանն էլ լավ եղավ՝ դերասանի նման, բայց այն ժամանակ, երբ մենք մեր տղաների մարմիններն էինք փնտրում, նրանք ֆեստիվառներ ու փառատոներ էին կազմակերպում: Իրականությունը սա է: Երբ ես իմ որդու սառած մարմինն էի փնտրում, իշխանությունները գինու փառատոնի ժամանակ զվարճանում էին, ուրախանում, երգում, պարում: Այս իշխանության ամեն ինչը կեղծ է, անգամ նրանց բերած խաղաղությունն է կեղծ, ոչ մի դեպքում նրանք չեն կարող մեր երկրին խաղաղություն բերել»:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՈՒՆՔԸ ՍԱՐՔԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ, ԱՅՔՆ ԷԼ ՀԵՏՆ ԵՆ ՀԱՆԵԼ

Հունվարի 1-ից Առողջության համընդհանուր ապահովագրությունը դարձավ պարտադիր բոլորի համար: Անցած տարի շատ խոսվեց այդ մասին, շատ մասնագետներ քննադատեցին եւ այդ համակարգը ներդնելը վաղաժամ համարեցին: Բայց պարզ է, որ այս իշխանությունը լրացուցիչ հարկատեսակներ ավելացնելու, մարդկանց հարկային բեռն ավելացնելու մեծ մասնագետ է եւ փող շատ է սիրում, իսկ այս համակարգը լրացուցիչ մուտքեր է ապահովելու պետբյուջե, ուստի մտցրին: Սակայն հունվարից բազում բողոքներ են հնչում, որ համակարգը նորմալ չի գործում: Հունվարի 1-ից ավելի քան 88 հազար ապահովագրական գրանցում է իրականացվել, որից մոտ 7 հազար 500-ն ամբուլատոր այցեր են, ավելի քան 8 հազար 700-ը՝ հիվանդանոցային: Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն ասում է՝ փորձում են համակարգն ավելի մարդակենտրոն դարձնել՝ ավելի քիչ գործընթացներով: Այդուհանդերձ, դժգոհություններ կան ու հատկապես «Արմեդ» համակարգից, որտեղ պետք է գրանցված լինեն շահառուները:

«Որեւէ մեկը չէր ակնկալում, որ առողջության ապահովագրության բարեփոխումը մի կոճակ է, որ պիտի սեղմենք, եւ ամբողջը 100 %-ով, ամեն ինչ բոլոր օղակներում վայրկյանի ճշգրտությամբ աշխատի: Սա շատ ահռելի մեծ բարեփոխում է, իր մեջ ներառում է 1 մլն 600 հազար հոգի: Բուժաշխատողների մի մեծ շրջանակ նույնպես ներառում է: Կան փոքր տեխնիկական խնդիրներ, որոնք ընթացքում շտկվում են, կան մարդուն ավելի պարզ եւ հեշտ դարձնելու աշխատանքներ, որոնք շարունակական են լինելու, սպասարկման ավելի կարճ ժամկետներ կլինեն: Այդ ուղղությամբ նույնպես աշխատում ենք»,- ասում է նախարարը:

Առողջապահության փորձագետ Անուշ Պողոսյանը, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է, որ տեղի ունեցած փոփոխությունները մեծ դժգոհություններ են առաջացրել, օրինակ՝ մանկավարժների շրջանում: Նրա խոսքով՝ առողջապահության նախարարը ոլորտում «ունքը սարքելու փոխարեն, աչքն էլ հետն է հանել». «Կան խնդրահարույց կողմեր: Սոցփաթեթի շահառուները, նրանք, ովքեր 200 հազար դրամ եւ ավելի աշխատավարձ են ստանում, նրանք այլեւս չեն համարվում սոցփաթեթի շահառու, այլ ուղղակի դառնում են համընդհանուր ապահովագրության շահառու: Այսինքն՝ այստեղ հարց է առաջանում. հանգստի համար նախատեսված 72 հազար դրամի հետ ինչ է լինում: Ինչպես է այս հարցը լուծվելու: 72 հազար դրամ մեկ տարվա համար մարդիկ ստանում էին գումար՝ հանգստի համար, սակայն այն իրականում կարողանում էին օգտագործել տարբեր նպատակներով, օրինակ՝ ուսման վարձի վճար եւ այլն: Հաջորդ խնդրահարույց կողմն էլ այն է, որ բոլոր նրանք, ովքեր չեն ստանում 200 հազար եւ ավելի աշխատավարձ, մնում են որպես սոցփաթեթի շահառու, սակայն այստեղ էլ կա այլ խնդիր: Որոշ հետազոտություններ դառնում են ոչ պարտադիր: Մի կողմից, մենք խոսում ենք կանխարգելիչ առողջապահության կարեւորության մասին, մյուս կողմից էլ՝ ասում ենք, թե պարտադիր չեն տարեկան երբեմնի պարտադիր հետազոտությունները: Ինձ համար սա խիստ անհասկանալի մոտեցում է: Այս առումով տուժում են մանկավարժները: Մինչ այժմ ստացող ծառայությունները, օրինակ, նրանց համար փոխվել են, արդյունքում՝ ավելի սեղմ ու ոչ ընդգրկուն ծառայություններ են նախատեսված: Նրանք այլեւս դիտարկվում են համընդհանուր ապահովագրված քաղաքացիներ, ինչպես, օրինակ, 65 տարեկանները կամ 0-18 տարեկանները: Նախարարության այս քայլը նման է նրան, որ իբրեւ ուզում էին մի լավ բան անել, սակայն, ինչպես միշտ, ձախողեցին: Այն շատ պրոբլեմներ է ստեղծել, եւ քաղաքացիները ծայրաստիճան դժգոհ են այս փոփոխություններից»:

Տասնյակ նախկին զինվորականներ դատի են տվել ՊՆին

2025-ին տասնյակ քաղաքացիներ դիմել են Վարչական դատարան՝ ընդդեմ պաշտպանության նախարարության: Նրանք նախկին զինվորականներ են, որոնք երկար տարիներ ծառայել են ՊՆ-ում, պետությունը պարտավորություն է ունեցել նրանց բնակարան հատկացնելու, բայց չի հատկացրել: Նրանք տարիներով մնացել են ՊՆ-ի ցուցակում՝ այդպես էլ բնակարան չստանալով: Նախկին զինվորականների հայցերում պահանջը ձեւակերպված է այսպես. «ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարան ձեռք բերելու համար հայցվորին հասանելիք բնակարանի գնին համարժեք/բնակարանի արժեքի 100 տոկոսի չափով/անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին»:

Հայցվորների շահերը դատարանում ներկայացնում է փաստաբան **Նորիկ Նորիկյանը**: Նա մեզ հետ զրույցում նշեց. «Մի քանի հայցեր ունեմ, որոնք նախկին զինվորականներ են ներկայացրել՝ պահեստազորում հաշվառված: Իրենք տարիներ շարունակ հաշվառված են եղել բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում ու երբ չեն ստացել, դիմել են դատարան՝ դատական պաշտպանության միջոցով պարտավորեցնել նախարարությանը՝ ֆինանսական աջակցություն տրամադրել՝ իրենց բնակարանային պայմանների բարելավման խնդիրը լուծելու նպատակով՝ նոր բնակարան ձեռք բերելու համար: Իրենք երբ դարձել են զինվորական, գործող կարգավորումներով, զինվորական ծառայության ընթացքում, եթե ունեն բնակարանային պայմանների բարելավման կարիք, ներկայացնում են համապատասխան փաստաթղթերը եւ ըստ տարիների ստանում են: Կառավարության 2007 թվականի թիվ 384 որոշմամբ սահմանվում եւ կարգավորվում է, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու օրվա դրությամբ կադաստրային վերջին 3 ամսվա շուկայական արժեքի մոտարկված թվով է փոխհատուցվում»:

- Դատարանն ինչ որոշում է կայացնում՝ բավարարում է, թե մերժում հայցերը:

- Բավարարվում են, դրանք այնպիսի պահանջներ են, որ բավարարվում են: Եթե իրենք հաշվառված են եւ այս տարիների ընթացքում չեն վատթարացրել կամ բարելավել իրենց բնակարանային պայմանները, այսինքն՝ վերջին 5 տարվա ընթացքում ձեռք չեն բերել կամ չեն օտարել, մնում են բնակարանային պայմանների հերթացուցակում, միանշանակ, այդ հայցերը բավարարվում են: Ինչպես կարող է պետությունը զինծառայողի հետ պայմանագիր կնքել, վերջինս 20 տարի ծառայի, հաշվառվի, եւ հետո ասի՝ չէ, ես հետ եմ կանգնում իմ պայմանից: Հասկանում եք՝ չի լինի այդպես:

- Պատասխանող կողմի առարկությունները որոնք են:

- Առարկություններ լինում են ժամկետների մասով, ֆինանսական հնարավորությունների, կարողությունների մասով:

Անանա ՊԱՊԻԿՅԱՆ

ՇԵԽՈՒՅՑ

ԴՈՒՔ ՈՒՐԻՇ ՀԵՐՈՍԻ ԱՆՈՒՆ ՉԳԻՏԵ՞Ք

Նիկոլ Փաշինյանին կից գործող, բայց ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն կոչվող մարմինը հրապարակել է 2026 թվականին Հայաստանին սպառնացող արտաքին ռիսկերի վերաբերյալ զեկույց, որն ունի «Հայաստանի հիբրիդային սպառնալիքները 2026-ին» անունով բաժին: Այդ բաժինը կարդալուց հետո գալիս ես մի քանի եզրակացության.

1. Զեկույցը գրել է ավագ դպրոցի 11-12-րդ դասարանի որեւէ դպրոցական, որի ծնողները ՔՊ-ական են, եւ ինքն էլ, հանգամանքների բերումով, ՔՊ-ական քարոզչության զոհ է:

2. Զեկույցը գրվել է՝ հիմնվելով վերջին մեկ ամսում ՔՊ-ամերձ մամուլի, ՔՊ-ականների ելույթներից արված ծաղկաքաղի միջոցով:

3. Նիկոլ Փաշինյանին կից գործող արտաքին հետախուզություն կոչվող ծառայությունը կարծում է, որ իրենց գոյության միակ սպառնալիքի աղբյուրը Ռուսաստանն է:

4. Ռուսաստանը սպառնում է ոչ թե Հայաստանին, այլ՝ ՔՊ իշխանությանը:

Որպեսզի ավելի լավ պատկերացնենք, թե իրենից ինչ է ներկայացնում Հայաստանի արտաքին հետախուզություն կոչվող ծառայությունը, խորհուրդ եմ տալիս անպայման դիտել դեռեւս 1959 թվականին նկարահանված «Մեր մարդը՝ Հավանայում» ֆիլմը: Այն երգիծական ժանրի ֆիլմ է, այնպես, ինչպես Հայաստանի արտաքին հետախուզության ծառայություն կոչվող հաստատությունը եւ նրա կազմած փաստաթուղթը՝զեկույցը, որի հիման վրա կարելի էր լավ երգիծական ֆիլմ նկարել: Մի քանի բառով ասեմ, որ «Մեր մարդը՝ Հավանայում» ֆիլմի հերոսը փոշեկուլներ վաճառող շարքային մարդ է, որը, ունենալով ֆինանսական խնդիրներ, սկսում է համագործակցել բրիտանական արտաքին հետախուզության հետ, վերադասին ներկայացնում է, թե ինքը ստեղծում է գործակալական ցանց, որն իրականության մեջ գոյություն չունի, իր վաճառած փոշեկուլների նկարները մեծացնելով՝ ստեղծում է թշնամական օբյեկտների մակետներ եւ դրանք ներկայացնում որպես իր կողմից հավաքագրվող տեղեկություններ, որոնք շատ լուրջ են ընդունվում Լոնդոնում գտնվող վերադասի կողմից: Երբ ի վերջո կեղծիքը բացահայտվում է, որոշում են կեղծարարին պարգեւատրել, քանի որ, եթե պատժեին, ապա դրանով նույնքան հիմար վիճակի մեջ կհայտնվեին նաեւ նրանք, ովքեր տարիներ շարունակ նրա կողմից մատուցվող հիմարությունները լուրջ էին ընդունել: Նմանությունը մեկին մեկ է, միայն այն տարբերությամբ, որ ֆիլմում նման հիմարությամբ եւ կեղծարարությամբ էր զբաղված մի մարդ, իսկ այստեղ՝ մի ամբողջ պետական հաստատություն, թերեւս, իր բազմաթիվ աշխատակիցներով:

Զեկույցում արվում են բազմաթիվ պնդումներ, որ ինչ-որ երկիր նախատեսում է Հայաստանում գործող գործակալական ցանցի ու սատարվող ուժերի ակտիվացում, այնպես էլ՝ Հայաստանի ներքաղաքական կյանքում արտաքին ուժերի հետ կապված նոր քաղաքական ուժերի կուլտիվացման գործողություններ (քաղաքական ինժեներիա): Ներքին անկայունացման հիբրիդային գործողություններ, երիտասարդության եւ ակտիվիստական խմբերին թիրախավորող,վերջիններիս քաղաքական հայացքները,հայրենասիրական զգացմունքները շահագործող եւ մանիպուլացնող գործողություններ, հանրային դիվանագիտության, կրթական, սպորտային ու ճանաչողական միջոցառումների քողի տակ գաղափարական պատրաստման եւ հավաքագրման գործողություններ, տնտեսական եւ էներգետիկ ճնշումներ: Բայց... ուշադրություն. չի նշվում, թե կոնկրետ որ երկրի կողմից է դա իրականացվում, որ արտաքին ուժերի, եւ ամենակարեւորը՝ այս բոլոր պնդումներն արվում են առանց որեւէ, նույնիսկ նվազագույն, անգամ չնչին ապացույցների: Իսկ ինչո՞ւ: Դե, որովհետեւ երբ ասում ենք հիբրիդային պատերազմ կամ արտաքին ճնշում, բոլորը հասկանում են Ռուսաստանին, երբ զեկույցում ասվում է՝ «այլ պետության կառավարող շրջանակների հետ ուղղակի կամ անուղղակի կապված գործարարները, հոգեւոր-մշակութային գործիչներն ու կազմակերպված հանցավոր տարրերը», բոլորը հասկանում են, չէ՞, թե որն է այդ պետությունը, պարտադիր չէ, որ զեկույցում գրվի «Ռուսաստան»: Կարող էին, չէ՞, գոնե ձեւի համար օգտագործել «պետություններ» ձեւակերպումը, բայց ի՞նչ իմաստ ունի խուսափել կոնկրետությունից, երբ բոլորի համար պարզ է, որ թշնամին մեկն է՝Ռուսաստանը:

Զեկույցում նշվում է տնտեսական եւ էներգետիկ ճնշումների մասին, հասկանում եք՝ ինչի մասին է խոսք. Ռուսաստանը Հայաստանի տնտեսվարողների համար կփակի իր շուկան, խոչընդոտներ կստեղծի արտահանման համար, զեկույցում նշվում է, որ 2025 թվականին նման դեպքեր արձանագրվել են: «Այս գործողությունների նպատակը գործարարությամբ զբաղվող ընտրողների շրջանում կառավարության քաղաքականությունից դժգոհություն գեներացնելը եւ, հետեւաբար, նրանց ընտրությունն ուղղորդելն է: 2025 թվականին արձանագրված այս միտումը, մեծ հավանականությամբ, կպահպանվի 2026 թվականին»,- շատ խորաթափանց կանխատեսում է անում Արտաքին հետախուզության ծառայությունը: Այս ծառայությունը կանխատեսում է նաեւ էներգետիկ ճնշումներ, միգրացիոն կանոնների փոփոխություններ, որոնց «ընտրողաբար կիրառումը հավանական է, որ Հայաստանի քաղաքացի միգրանտների նկատմամբ հիբրիդային գործիքակազմի մաս կկազմի»: Սա էլ այն մասին է, որ Ռուսաստանը կարող է ճնշումներ կիրառել այդ երկրում ապրող եւ աշխատող ՀՀ քաղաքացիների նկատմամբ, երեւի նրա համար, որ հանդուրժում են Փաշինյանի իշխանությունը կամ Ռուսաստանից չեն գնում Հայաստան՝ իշխանափոխություն կազմակերպելու համար:

Բացի այս ճնշումները, հնարավոր են այլ ճնշումներ եւս. «Հայաստանի Հանրապետության կառավարության ու օրենսդիր մարմնի բարձրաստիճան պաշտոնյաների ու նրանց ընտանիքի անդամների թիրախավորումը, նրանց դեմ զրպարտչական նոր արշավների ձեռնարկումը»: Այսուհետ ՀՀ իշխանության ներկայացուցիչների մասին որեւէ ոչ նպաստավոր տեղեկություն, խոսք կամ միտք դիտարկվելու է որպես Ռուսաստանի կողմից կազմակերպված եւ իրականացվող միջոցառում:

Ի՞նչ կարող ենք ասել. իսկապես Հայաստանը շատ հզոր եւ խորաթափանց Արտաքին հետախուզության ծառայություն ունի, եւ այդ ծառայությունն իր գործակալական ցանցով ուղղակի ողողել է Ռուսաստանի բոլոր պետական եւ նույնիսկ ոչ պետական հաստատությունները, այդ գործակալներն ամեն օր եւ ամեն ժամ մատակարարում են հույժ գաղտնի տեղեկություններ Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի մտադրությունների մասին: Ոչ մի թշնամական գործողություն եւ անգամ մտադրություն աննկատ չի մնում Քրիստինե Գրիգորյանի եւ նրա ղեկավարած հիմնարկի ուշադրությունից, եւ հաստատ նա եւս պարգեւավճարներ ստացողների ցուցակում է: Մնում է միայն մի հարց պարզել. այս զեկույցը գրվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանի՞, թե՞ Նիկոլ Փաշինյանի աշխատասենյակում, թե՞ մեկը գրել է, մյուսը՝ խմբագրել: Կամ եթե թշնամին այդքան բացահայտ է, իսկ նրա մտադրությունները՝ այդքան տեսանելի, ինչի՞ համար է մի ամբողջ ծառայությունը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒՊԻԶՄ ԿԵՍ ՔԱՅԼ Է

Բոլոր ժամանակների ամենաողորմելի քաղաքական մեծամասնությունը տեսած ԱԺ-ն ավարտում է իր անիմաստ, իսկ այլ գնահատումներով՝ վտանգավոր գոյությունը: ՔՊ-ի օրենսդրական շտաբը վերջին ջղաձգումների մեջ է: Աշխատում են ուժերի գերլարումով, որ պարտակեն դեռ չպարտակվածը, քողարկեն չքողարկվածը, իրենք էլ հնարավորինս մաքրվեն բազում մեղքերից, որ արդյունք են ՔՊ-ական կառավարությանն անմնացորդ նվիրումի եւ կառավարության հայրենաքանդ քաղաքականությունը մեխանիկորեն պաշտպանելու: Հիմա կասեք՝ ՔՊ-ական կառավարություն-ՔՊ-ական ԱԺ՝ ուրիշ ի՞նչ էիք ուզում: Ոչ, սիրելիներս, այդպես չէ: ԱԺ-ն ինչական էլ լինի, պետք է մնա իր տեղում, կառավարությունը՝ իր: Ավելին, ԱԺ-ն, որպես առաջնային քաղաքական մանդատ ունեցող մարմին, կարող էր եւ պետք է կառավարությանը ցույց տար իր տեղը: Մինչդեռ հակառակ պատկերն է, կառավարությունն ինչ ուզում՝ թափ է տալիս ԱԺ-ի գլխին: Եվ այդպես՝ արդեն 5 տարի:

Ինչո՞ւ ենք այս վիճակում: Ո՛չ քաղաքագիտական բարդ հաշվարկներ են պետք՝ այս հարցին պատասխանելու համար, ո՛չ էլ պետք է ժողովրդավարություն կոչվող հասկացությանը մեղադրել: ԱԺ, այսպես կոչված, քաղաքական մեծամասնությունը պարզապես «տուպոյ» է: Այո, тупой и еще тупее… Համոզվելու համար, ձեզ հարց տվեք՝ իսկ ո՞վ է այդ մեծամասնությանը լցրել ԱԺ… Վստահ եմ, ձեզ իսկույն ամեն ինչ պարզ կդառնա: Պակաս «տուպոյ» չենք նաեւ մենք՝ շարքային քաղաքացիներս, որ ԱԺ-ում հավաքված այդ բիոմասսան համարում ենք քաղաքական գործիչների հավաքածու:

Այսօր կանդրադառնամ ԱԺ ղեկավարությանը: Նախագահությունում 3 ՔՊ-ական են, երեքն էլ՝ քաղաքական առումով ինչքան ուժ ունեն՝ «տուպոյ»: Հակառակ պարագայում բոլոր 3 աթոռները չէին զբաղեցնի՝ իմանալով, որ փոխնախագահներից մեկը պետք է լինի ընդդիմադիր խմբակցությունից: Այս եռյակի տանձին չի, սակայն… լավ էլ թառել են նախագահությունում, եւ ամեն մեկն իր համար արտահերթ ելույթ է պատվիրում, արտահերթ թռնում ընդդիմադիրների դեմքին, բարձրախոս անջատում, անվտանգություն կանչում: Մի խոսքով՝ ինչ ուզում, անում են, ընդհուպ՝ շուստրիություն: Սրանց անվիճելի «գլավարը», ով էլ կկասկածեր, Ալեն Սիմոնյանն է, որ, իր տարօրինակ բարեմասնություններով հանդերձ, ունի նաեւ մի մեծ բացասական կողմ՝ ԱԺ նախագահն է: Այո, ԱԺ նախագահ է, բայց քաղաքական գործիչ չէ, քաղաքական հոտառություն չունի: Նրա «ղեկավարած» ԱԺ-ն շուտով կավարտի աշխատանքները, բայց նա դեռ չգիտի կամ գլխի չի ընկնում, որ, երբ առաջիկա ընտրություններից հետո մեծ էշին ախոռից հանեն, հաջորդն ինքն է լինելու, որից պահանջելու են պատասխան տալ երկրի ու ժողովրդի այս թշվառ վիճակի համար: Դու ի՞նչ ես արել, Ալեն Սիմոնյան, որ Հայաստանի շատ տարածքներ «խաղաղ ճանապարհով» չօկուպացվեն, որ Արցախը չհայաթափվի, որ հազարավոր հոգեւոր եւ մշակութային արժեքներ չմնան անտեր, որ տասնյակներով հայ մարդիկ չտառապեն ադրբեջանական բանտերում, որ Հայաստանում քաղբանտարկյալներ չլինեն, որ թոշակները բարձրանան, որ աշխատատեղ լինի, որ ՀՀ քաղաքացին վերջապես արժանապատիվ կյանք ունենա իր հայրենիքում: Ոչինչ էլ չես արել, Ալեն Սիմոնյան, դու միայն ընդօրինակել, կապկել ես քո կուսղեկին՝ միայն այդքանը: Բայց մի՞թե հնարավոր է միայն նայելով քաղաքական գործիչ դառնալ: Իհարկե՝ ոչ… Եթե նայելով հնարավոր լիներ քաղաքական գործիչ դառնալ, ապա դասաբի շունը վաղուց դասաբ դարձած կլիներ: Ավելի պարզ հարց տամ. ի՞նչ ես կարծում՝ կարո՞ղ է քաղաքական գործիչ համարվել մեկը, որ բավական չէ հանրության վրա «թքողի» համբավ է վայելում, մի բան էլ մասնակցում է «ուղտերթի»: Լավ, դու չէի՞ր հասկանում, որ բոլոր տեսախցիկներն այդ օրը քեզ վրա են սեւեռվելու:

Եվ ավարտեմ Ալեն Սիմոնյանի քաղաքական տուպիզմի մասին վկայող մի փոքրիկ, բայց խոսուն դրվագով: Սույն բարձրաստիճան ՔՊ-շնիկը, ուրեմն, «լայվ» էր մտել ու ապաքաղաքական դիրքերից, իբր, քննադատում էր Դաշնակցությանը: Ասում էր՝ ինքնիշխան Հայաստանը Դաշնակցության ամենամեծ վախն է: Հոխորտում էր, թե առաջիկա ընտրություններում, ժողովրդի աջակցությամբ, մեկընդմիշտ փակելու է Դաշնակցության էջը: Հիմա ես նայում եմ սրա «լայվն» ու մտածում՝ լավ, մի՞թե ԱԺ նախագահի աթոռին հասած մարդը կարող է այնքան «տուպոյ» լինել, որ նստի Դաշնակցության ստեղծած ՀՀ զինանշանի ու եռագույնի ֆոնին եւ Դաշնակցություն քննադատի: Աբսո՞ւրդ է: Չէ… Հրանտ Մաթեւոսյանն ասում էր՝ կովը հիշողություն չունի:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՄՆ

ԹՐԱՄՓԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ 1 ՏԱՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հունվարի 20-ին լրանում է ԱՄՆ նախագահի պաշտոնում Դոնալդ Թրամփի պաշտոնավարման մեկ տարին: Մեկամյա այդ պաշտոնավարման շրջանում Թրամփը կարծում է, որ անհաշվելի նվաճումներ արձանագրեց, ամերիկյան քաղաքացիներն էլ կարծում են, որ, ընդհակառակը՝ Թրամփը համարյա միայն տապալումներ ունեցավ: Ընդհանուր առմամբ, իրադրային բեկումներ չեղան աշխարհում. որտեղ պատերազմում էին, շարունակեցին պատերազմել, որտեղ բախվում-հանդարտվում էին, շարունակեցին բախվել-հանդարտվել: Իրան-Իսրայել բախում եղավ, ցավոք, դա Իրան-Ադրբեջան բախման չվերաճեց, Ռուսաստանը եւ Ուկրաինան շարունակեցին պատերազմել, Գազայի գոտում ռազմական բախումները չավարտվեցին, բարեբախտաբար, գոնե ինտենսիվությունը աշնանը նվազեց, հրաշալի էր 2025-ի տարեվերջին քրիստոնյաների պաշտպանության համար Նիգերիայի տարածքում որոշակի վայրերի ռմբակոծումը: Վերջապես, ինչ խոսք, տպավորիչ էր Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոյին մի քանի հարյուր անվտանգային աշխատակիցների միջից առեւանգելը՝ ԱՄՆ Delta ջոկատայինների կողմից, երբ հակառակորդին պատճառվեց 150-ի չափ զոհ, 100-ից ավելի վիրավոր, մինչդեռ ԱՄՆ ուժերը չունեցան մարդուժի, նույնիսկ տեխնիկայի կորուստ: Հոլիվուդի սցենարիստներն անգամ այդպիսի ընթացքով, արդյունքներով եւ վերջաբանով գործողություն չէին երեւակայի:

Դրա համար էլ, երբ Նիկոլաս Մադուրոյին ձերբակալել-Նյու-Յորք տեղափոխելուց հետո լրագրողները, փորձագետները, քաղաքական գործիչները սկսեցին աջուձախ աղաղակել, թե սա միջազգային իրավունքի ոտնահարում է, դրվածքների կազմաքանդում, հիմա ԱՄՆ-ի օրինակով Պեկինն ու Մոսկվան էլ ձեռքներին ազատություն կտան, թայվանցի գործիչներից մեկը հիշարժան պատասխան էլ տվել՝ ի սեր Աստծո, հանգստացեք, ո՛չ Թայվանն է Վենեսուելա, ո՛չ էլ Չինաստանն է ԱՄՆ, որ կարողանա այդ կարգի գործողություն իրականացնել: Իսկապես... պատահակա՞ն է, որ խոսքերով միջազգային իրավունքի «անխոնջ» պաշտպան Վլադիմիր Պուտինն իր դաշնակից Վենեսուելայի նախագահի առեւանգումից հետո բառ չասաց, նույնիսկ օրեր անց լուռ էր: Որպես հատուկ ծառայությունների նախկին սպա՝ երեւի պրոֆեսիոնալի աչքով էր նայել կատարվածին եւ ուշքի չէր գալիս նրանից, թե պատրաստվածության ու համակարգման ինչ մակարդակ է հասու ամերիկյան զինուժին եւ հատուկ ծառայություններին: Չհաշված՝ այլեւս կողմնակի էֆեկտը, երբ ամերիկացիները ցույց տվեցին, որ ռեժիմ գլխատելով կարող են համակարգի հետ գործակցել՝ ժամանակի մեջ ձգտելով դրա աստիճանական ապամոնտաժման: Առաջին դեմքին վերացնելու եւ շրջապատի հետ գործակցելու նման տակտիկան կարող է խարդավանքները սրել ռեժիմների պարագլուխների շուրջ՝ լինեն նրանք այաթոլլաներ, խունտաներ, թե Կրեմլում գտնվողներ:

Մի խոսքով, աշխարհում ինչ խառնաշփոթ կար, Թրամփը մի քիչ ավելի խառնեց: Վերջում էլ նեղացած նրանից, որ իրեն Խաղաղության նոբելյան մրցանակ չտվեցին (չնայած Նիկոլ Փաշինյանի ու Իլհամ Ալիեւի կարգի «մեծություններն» էին առաջադրել), Թրամփը որոշեց, որ այդ բարոյական հարվածը միայն Գրենլանդիայի ձեռքբերմամբ կարող է չեզոքացվել, եւ անցավ Գրենլանդիան բռնակցելու թեմատիկայով դատարակախոսելուն: Եվրոպայից հայտարարեցին, որ դա կնշանակի ՆԱՏՕ-ի կազմաքանդում եւ ռազմական բախում: Այդտեղ Թրամփը բարվոք համարեց երգը փոխել, թե ինքը ռազմական գործողություններ չի դիտարկում Գրենլանդիայի բռնակցման համար, այլ՝ տնտեսական պատժամիջոցներ, փետրվարի 1-ից սահմանում է 10% մաքսատուրք Եվրոպայի այն երկրների դեմ, որոնք աջակցում են Դանիային եւ Գրենլանդիային, հուլիսի 1-ից մաքսատուրքը կդառնա 25%: Եվրոպայից հակընդդեմ պատասխանեցին, որ իրենք էլ առհասարակ եվրոպական շուկան կփակեն ամերիկյան որոշ ապրանքների եւ ծառայությունների համար... Ասել է թե՝ պետք է պատրաստ լինել ամիսներ ձգվող միջմայրցամաքային լեզվակռիվների, որոնց վերջակետը, հավանաբար, կդրվի աշնանը, ԱՄՆ կոնգրեսի եւ սենատի mid-term ընտրություններում:

Եթե հիմա ԱՄՆ Սենատում էլ, Ներկայացուցիչների պալատում էլ հանրապետականները 3-5 ձայնի առավելությամբ մի կերպ մեծամասնություն են պահպանում, ընտրություններից հետո պարզ է, որ Թրամփից վրեժ լուծող ամերիկացիները հանրապետականներին կդարձնեն կատարյալ փոքրամասնություն, այնուհետ կոնգրեսականները հստակ կսահմանափակեն ԱՄՆ նախագահի լիազորությունները՝ Գրենլանդիայի ուղղությամբ որեւէ ինքնագլուխ քայլեր կատարելու: Հավանաբար, դրանով էլ ոչնչից բարձրացած մեծ աղմուկը կավարտվի: Այլընտրանքը, եթե Թրամփը գնի Գրենլանդիան (ինչպես հայտարարում է, թե ցանկանում է եւ պատրաստ է անել), Դանիային եւ Գրենլանդիային վճարելով 700 միլիարդ դոլար, ամերիկացիներն այդպիսի միջոցների վատնման համար Թրամփին ողջ-ողջ այն աշխարհ կուղարկեն:

Ամփոփելով Թրամփի մեկամյա պաշտոնավարման արդյունքերը՝ կարելի է ասել, որ 2025-ը Թրամփի կողմից միջազգային դրվածքները եւ հաստատություններն անտեսելու ու ԱՄՆ հեգեմոնիան գետնի վրա հաստատել-տարածելու շրջան էր: Անշուշտ, դրանում կա եւ դրական կողմ, եւ բացասական: Կարեւորը՝ որ հայության եւ Հայաստանի համար Թրամփի պաշտոնավարման առաջին տարին հրաշալի էր:

Նախ, 2025-ի օգոստոսին Վաշինգտոնում ստորագրված "MEMORANDUM OF UNDERSTANDING between the Government of the United States of America and the Government of the Republic of Armenia regarding the Crossroads of Peace Capacity Building Partnership" հուշագրով, ի լուր աշխարհի եւ հատկապես Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի, Ադրբեջանի, ԱՄՆ-ն հայտարարեց, որ հաստատում է իր ներկայությունը Հայաստանում, բոլոր մյուսները հեռու մնան Հայաստանից: Կես տարի անց՝ 2026-ի հունվարին, մեկ այլ փաստաթղթում, որ ստորագրված ԱՄՆ-ի եւ Հայաստանի ԱԳ նախարարների միջեւ, վերնագրված էր՝ The TRIPP Implementation Framework (TIF) եւ կոչված էր առարկայացնելու նախորդ հուշագրի դրույթները, Ադրբեջանի թեման գործնականում փակվեց: «Ադրբեջան» բառը TIF-ում ֆիզիկապես միայն մեկ անգամ է հիշատակվում՝ "Further institutionalization of peace between Armenia and Azerbaijan" բառակապակցությունում: Դրանից այն կողմ Ադրբեջանը ո՛չ հիշատակվում է, ո՛չ գոյություն ունի ԱՄՆ ծրագրերում: Պետքարտուղար Ռուբիոն TIF-ի ստորագրումից առաջ իր ողջույնի խոսքում նույնպես Ադրբեջանին չհիշեց: «Ադրբեջան» անունը հոլովվել էր TIF-ի մասին ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի խոսնակի գրասենյակի տարածած լուրի տեքստում, որն արդեն սպառիչ խոսում է Ադրբեջանի արժեքի, տեղի ու դերի մասին ԱՄՆ ծրագրերում: (Թեմայից փոքր-ինչ շեղվելով. Հայաստանի ու Թուրքիայի ղեկավարներին 60 այլ երկրների թվում, Թրամփի կողմից ձեւավորվող Board of Peace-ին հիմնադիր մասնակցի կարգավիճակով հրավիրելը, Ադրբեջանին անտեսելը, նույն միտումի դրսեւորում էր):

2026-ի հունվարին Վաշինգտոնում ստորագրելով The TRIPP Implementation Framework-ը (TIF), ԱՄՆ-ն սեւով-սպիտակի վրա, հրապարակավ եւ շատ հստակ ամրագրեց, թե ինչ է պահանջում Թուրքիայից որպես TRIPP ծրագրի իրագործման հիմք եւ գրավական. "Progress towards Armenia-Turkiye full normalization", թարգմանաբար՝ «Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ամբողջական կարգավորում»: Իսկ դա նշանակում է ոչ միայն պետական սահմանի բացում, այլեւ Միջերկրական ծովից Հայաստան, այն է՝ Կիլիկիա-Հայաստան տրանսպորտային հաղորդակցության հաստատում, որն ԱՄՆ հետաքրքրությունն է եղել 100 տարի առաջ Սեւրի դաշնագրով Հայաստանի մանդատը ստանձնելիս եւ ԱՄՆ հետաքրքրությունն ու առաջնահերթությունն է այսօր՝ այլեւս հրապարակավ արձանագրվող:

Այնպես որ, Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը երբ հայտարարում է, թե ողջունում է ԱՄՆ-ում ստորագրված TIF փաստաթուղթը, իրականում երեւի թե սրտից արյուն է կաթում: Եվ իրականությունը գլխիվայր շրջում է դատարկախոսելիս, թե Հայաստանին մի քանի քայլ է մնացել կատարելու: Հայասատանն իրականում ոչ մի քայլ չունի կատարելու, սեղանին TIF-ն է, եւ դրա իրագործման համար Թուրքիան պետք է քայլեր կատարի, ապահովի Հայաստան-Կիլիկիա ուղիղ տրանսպորտային հաղորդակցություն ԱՄՆ-ի համար: Եվ կապահովի:

Նկատելով Թրամփի ոչ օրդինար քայլերն ու ճնշում գործադրելու սերը՝ Թուրքիան այժմ, լեզուն կտրած, անելու է այն, ինչ հարյուր տարի առաջ Քեմալ-Լենին տանդեմի ու համագործակցության արդյունքում հաջողվեց չանել: Հիմա Լենինի նմանակ չկա, որ Էրդողանին փրկի. մեկը լինի՝ Պուտինին փրկի: Նաեւ Պուտինը դժվար էլ ուզենա հավասարվել կամ օգնել Էրդողանին, ավելի շահավետ պետք է լինի Հայաստանը՝ ԱՄՆ ազդեցության գոտի, Ադրբեջանը՝ ՌԴ տարածքային միավոր հեռանկարը:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԵՄ-Ն ԿԿԱՐՈՂԱՆԱ՞ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ՀԱԿԱԶԴԵԼ ԱՄՆ-ԻՆ

Կա որոշակի ռիսկ, որ Եվրոպան, այնուհանդերձ, կզիջի Գրենլանդիան Միացյալ Նահանգներին՝ վերջինիս սիրաշահելու համար՝ գրում է Bloomberg պարբերականը: Պարբերականին նման մտահոգություն հայտնել է այժմ Դավոսում ընթացող Տնտեսական գլոբալ ֆորումին մասնակցող բարձրաստիճան մի պաշտոնյա: Ըստ հոդվածագրի, Եվրոպայում շատերն են կիսում այն կարծիքը, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ձեւավորված աշխարհակարգը հոգեվարք է ապրում, եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից տարածքների զավթումը կփոխի համաշխարհային քաղաքականության հունն ու տրամաբանությունը: Այս համատեքստում, գնահատելով ուժերի անհավասարությունը, չի բացառվում, որ Եվրոպան վերջիվերջո նահանջի եւ զիջի Գրենլանդիան՝ Սպիտակ տան ղեկավարին սիրաշահելու համար:

Bloomberg-ը մանրամասնում է, որ եվրոպական քաղաքական շրջանակները շոկային վիճակում են հայտնվել այն բանից, երբ արագությամբ կորցրել են ԱՄՆ աջակցությունը, եւ Վաշինգտոնը բարեկամից ու դաշնակցից վերածվել է թշնամու կամ հակառակորդի: Ուշատերը եվրոպական քաղաքական վերնախավում չեն հասկանում, թե ինչպես արձագանքեն Թրամփի սպառնալիքներին, որոնք ամենօրյա ռեժիմով փոխվում են ու դառնում ավելի վտանգավո՝ չենթարկվելով որեւէ տրամաբանության: Թրամփի կողմից Գրենլանդիայի՝ աշխարհի խոշորագույն կղզու նկատմամբ հավակնությունների ձեւակերպումը, այդ հավակնություններին դեմ արտահայտվողների նկատմամբ մաքսատուրքեր սահմանելու սպառնալիքը եւ փորձը՝ ստեղծելու գլոբալ անվտանգության հարցերով ՄԱԿ-ին մրցակից կառույց, տեղի է ունենում Եվրոպայի համար ոչ այնքան լավ ժամանակներում, երբ «հին աշխարհամասը» չափազանց թուլացած ու խոցելի է: Եվրոպան արդեն իսկ պառակտված է ուկրաինական հակամարտության պատճառով, ու դրան գումարած՝ նաեւ տնտեսական հնարավոր եւ արդեն իսկ առկա խնդիրները կասկածելի են դարձնում այն, թե ի վիճակի կլինի՞ «հին աշխարհը» մինչեւ վերջ դիմադրել Միացյալ Նահանգներին, թե՞ ինչ-որ պահի տեղի կտա: Հատկապես, որ հարցական է նաեւ, թե որքանով կարող է ամերիկյան անվտանգության վրա ԵՄ-ն հույս դնել: Հատկապես, որ Թրամփի օրոք ամեն բան կարող է ակնթարթորեն դուրս գալ վերահսկողությունից եւ վերածվել ԵՄ-ի համար բացահայտ թշնամական իրողության:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԲԻԶՆԵՍ ԴՆԵԼՈՒ» ՀԱՄԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՓՈՂ» Է ՎԵՐՑՐԵԼ ՈՒ ՔԱՄՈՒՆ ՏՎԵԼ

Ուիստեմատիկաբար: Բացահայտորեն: Համակարգված: Իրենց խոսքերով՝ «Կաթիլ առ կաթիլ, քյաբաբ առ քյաբաբ»: Բավականին ուշ հասկացանք, որ մեր պետությունն այլեւս հայկական չէ, իշխող ռեժիմն էլ բռնապետական է, որ աստիճանաբար օկուպացրել ու երկիրը տանում է ստույգ կործանման: Չնայած նրանց հրամցրած կարգախոսն էր՝ «Ապագա կա»:

Ավետիս մեզ. մեր առջեւ իր ողջ «շուքով» այսօր փռված է այդ Ապագան: Տնտեսությունն օր-օրի ետընթաց է ապրել, բյուջեն տնօրինվում է միայն իրենց հաճույքների համար եւ օտարերկրյա պարտքերը մարելու վրա: Խելքից դուրս պարտք ենք կուտակել:

Իսկ ինչ են արել 8 մլրդ դոլարի հասնող գումարը. պատկերացրեք մի մարդու, որը ցանկություն է ունեցել զբաղվել գործարարությամբ, տունը գրավ դնելով՝ բանկից վարկ է վերցրել, ասենք, մի փոքրիկ կրպակ բացելու նպատակով, բայց երբ փողը ձեռքին է հայտնվել, բուն նպատակին չի ծառայեցրել՝ թանկարժեք մեքենա է գնել, թանկ ռեստորաններում է կերել, քամուն տվել առձեռն գումարը: Բայց գալու է, չէ՞, պատասխան տալու ժամանակը: Ահա, եկել է պարտքը փակելու օրը, իսկ ինչո՞վ փակի, կրպակդ մի քոռ կոպեկի օգուտ չի բերել, որովհետեւ... չի կառուցվել: Պարտատերերին ի՞նչ է մնում անել: Կեցցեք՝ գրավի դիմաց տունը խլել: Այդպես է պատահում նաեւ պետությունների հետ:

Հարցրեք՝ այ ողորմելիներ, ի՞նչ եք արել այդ ահռելի գումարը՝ 8 միլիարդը: Որ շատ «զզվեցրինք», մի օր խունտայի պարագլուխն աքլորացավ՝ զենք ենք առել: Եթե զենք է առել, ինչպե՞ս եղավ, որ պատերազմի օրերին չտեսանք... Ախր, ինքդ ես հայտարարել՝ զենքը մեր ինչի՞ն է պետք, եթե խաղաղությունն արդեն մեր դռանն է չոքել: Իսկ հարցը շարունակում է հնչել՝ ի՞նչ ես արել 8 միլիարդը: Դրա պատասխանը շատերին պարզ է՝ քամուն է տվել: Պարզ է, որ քամուն չի պատասխան տալու, պատասխան է տալու հայ ժողովրդին: Մյուս քամուն տված փողերի համար էլ է պատասխան տալու:

Իշխանության գալուն պես ստեղծեց ԱՆԻՖ հիմնադրամ, ապա լուծարեց, պարզվեց՝ պետությանը պատճառվել է 25 միլիարդ դրամի վնաս: Այդ փողը «հորով-մորով» անողներն անցած 3-4 տարում չեն հայտնաբերվել, ոչ ոք չի պատժվել: Ինչո՞ւ... Բանականությունը հուշում է. Դա էլ են յուրացրել՝ իր իսկ իմացությամբ, անգամ՝ գլխավորությամբ:

Աժ պատգամավորները միայն անցյալ դեկտեմբերին 3-ական միլիոն դրամ ստացան (անցյալում ընծայաբերված պարգեւավճարների թիվը կորցրել ենք), պաշտպանության փոխնախարարները՝ 4 միլիոն 800 հազար դրամ, պաշտպանության նախարարի խորհրդականները՝ 2 մլն 600 հազար դրամ, եւ այդպես շարունակ... Ի՞նչ փողեր են մեջ-մեջ արվում: Մեր հավաքած բյուջեի միջոցները բաժանվում են կառավարության նիստերում «չզեկուցվող» հարցերի ներքո, փոխանակ խնայողաբար, խելացիորեն օգտագործվեն, որ հանուրի բարեկեցությունն ապահովեն: Մինչդեռ եկամուտ ու բարեկեցություն են ապահովել Նիկոլի եւ իր յուրայինների համար:

Նիկոլը վարչապետության առաջին իսկ օրից երեւի թիմին զգուշացրել է՝ իմ իշխանության օրոք կաշառակերությամբ չզբաղվեք, կոռուպցիայի մեջ չթաթախվեք, չխայտառակվեք, տեղներդ վեր ընկեք՝ կաշա՞ռք եք ուզում, ես վախտը-վախտին կտամ... Էդպես հեշտ է վերահսկել ՔՊ-ահոտին: Փաստո՞ր՝ որքան ուզեք:

«Ալեքստեքստիլը» Նիկոլի սրտի տեքստիլն է, հայտնի անձին պատկանող ընկերությունը հաճախակի ազատվում է պետբյուջե գումարներ փոխանցելու պարտավորություններից: Ըստ ՊԵԿ-ի, մի անգամ 50 նոր աշխատատեղ ստեղծելու պարտավորություն ստանձնելու հիմնավորմամբ, պետբյուջե մուծվելիք 290 հազար դոլարից, բայց հետո «Ալեքստեքստիլը» չստեղծեց այդ նոր աշխատատեղերը: Նույն անձին պատկանող «Լ. Ա. պլաստ» ընկերությունը 2024-ին էլ ազատվեց 451 հազար դոլարի մաքսատուրք վճարելու պարտավորությունից:

Դարձյալ ՊԵԿ-ի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ միայն այդ ընկերությունները չեն Նիկոլ վարչապետի սիրելիները՝ «թանկագիններ» էլի կան: Ահավասիկ, 22եր արտադրող «Սարանիստ» ընկերությունը (Շշի Մելոյին պատկանող): Վերջին երեք տարում ընդունված կառավարության որոշումներով, «սառնասրտորեն» «Սարանիստին» հնարավորություն է տրվել պետությանը չվճարել գրեթե մեկ միլիոն դոլար: Եվ այս ընկերությունն էլ խոստացած պարտավորությունը՝ 40 նոր աշխատատեղ բացելու, չի կատարել, փոխարենը կրճատումներ է արել, եւ դա «օգնել է», որ հաջորդ տարի ազատվի 178 միլիոն դրամի վճարից՝ 15 նոր աշխատատեղ բացելու անհեռանկար խոստման դիմաց:

ՊԵԿ-ի հաշվետվություններում շատ ու շատ նմանատիպ «էկզոտիկ նորությունների» կհանդիպեք: Համատարած կողոպուտի ու թալանի, երկիրն անապատի վերածելու մի քանի օրինակ էլ բերենք՝ Նիկոլի նախկին համայնքապետ՝ Էջմիածնի քաջազնագույն քաղաքապետ Դիանա Գասպարյանի եւ նրա ընտանիքի բազմապրոֆիլ խարդախությունների գործն արդեն դատարանում է: Իսկ որտեղ է այժմ դշխուհի Դիանան, իհարկե՝ ազատության մեջ:

Իսկ ինչո՞ւ են ազատ ֆոֆռում ՔՊական վերնախավի կարկառուն մի շարք ներկայացուցիչներ՝ «երկրորդական», «երրորդական» դեմքեր: Զորօրինակ՝ Վեդիի քաղաքապետ Գարիկ Սարգսյանը (սրա քեռին «միալար» թանկարժեք տենդերներ է «հաջողացրել»), Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը, որն իր եղբորը շուկայականից զգալիորեն էժան գնով համայնքապատկան հող է նվիրել, Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը, որի հայրն ահռելի չափերի այգի է հիմնել, իսկ 1.5 մլրդ դրամի վարկի տոկոսի սուբսիդավորումը՝ 102 միլիոն դրամ, վճարել է ՀՀ կառավարությունը, ՏԿԵ նախկին նախարար Գնել Սանոսյանը, որի եղբայրները թանկարժեք առանձնատուն են կառուցել... իրենց մայրիկի համար:

Այլ օրինակնե՞ր. փնտրեք լրատվականներում՝ տասնյակ հազարավոր դեպքեր կպեղեք: Ու ինքներդ կհանգեք միանգամայն «օրինական» ու այդ փաստերով հաստատվող կռահմանը, այն է. ՔՊ-ականները ծրագրված, եռանդուն գործողություններով մզում-քամում են երկրի կենաց կենսահյութերը, ոչ միայն զրկում են զարգացման, առաջընթացի որեւէ հնարավորությունից, այլեւ դիտավորությամբ երկիրը տանում են ստույգ կործանման:

Ո՞ր իմաստուն, պատվախնդիր այրը մի ելուզակի 8 տարի իր գոգին կնստեցնի, որ սա իր քեֆով նրա «միրուքը փետի»: Բայց մենք, ավաղ, թույլ ենք տվել ու դեռ թույլ ենք տալիս:

Մտոք կույր պիտի լինել՝ չհասկանալու, որ ՔՊ խառնամբոխի՝ իշխանության գալու առաջին իսկ օրվանից սկսվեցին Հայոց Կեցության բոլոր կենսահյութերի քամում-մզումն ու ցամաքեցումը:

ARMENIAN NATIONAL INTERESTS FUND

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹ ԿԱՄ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ

1990-ական թվականներից աշխարհի տարբեր կետերում մարդիկ սկսեցին իրենց համար բացահայտել իրանական կինոն: Քննադատները, կինոյի ոլորտի մասնագետներն ու փառատոնային ժյուրիների անդամները առիթը բաց չեն թողնում՝ պարգեւատրելու կամ դրվատանքի խոսքեր ասելու իրանցի կինոգործիչներին: Իրանական կինոն, ինչպես իրանական պետության ու իրանցի ժողովրդի պատմությունը, ունեցել է իր վերելքներն ու վայրէջքները, սակայն կարողացել է մշտապես պահպանել այն յուրահատուկ արեւելյան գրավչությունը, որով դարձել է արեւելյան հեքիաթի կամ իրականության պոետականացման կինոարտացոլանք: Ու պետք է արժանին մատուցել իրանցի կինոգործիչներին, եթե հաշվի առնենք, որ Իսլամական Հանրապետությունը կրոնապետական երկիր է, որտեղ իշխող համակարգը միշտ չէ, որ բարեհաճ է տրամադրված կինոարվեստի հանդեպ: Սրանով է թերեւս պայմանավորված նաեւ, որ իրանական կինոն, այսպես թե այնպես, քաղաքականացված տարրեր է պարունակում իր մեջ:

Իսկ ամեն ինչ սկսվել է 1900 թվականին: Այդ ժամանակ դեռեւս միապետական Իրանում կար պալատական լուսանկարիչ՝ Միրզա Իբրահիմ խան անունով: Նա այն ժամանակվա իրանական շահ Մոզաֆարէդդինի պալատական լուսանկարիչն էր՝ Աքաս-բաշին: Շահին նա լուսանկարում է 1900 թվականի հուլիսին Փարիզ կատարած այցի ժամանակ ու ծանոթանում Լյումյեր եղբայրների ստեղծագործական գործունեությանը եւ այդ մասին պատմում շահին: Մոզաֆարէդդինը կարգադրում է Աքաս-բաշուն՝ ձեռք բերել բոլոր անհրաժեշտ սարքավորումները եւ տեղափոխել դրանք Թեհրան, որպեսզի տեղում հնարավոր լինի կինո նկարել: Աքաս բաշին արդեն 1900 թվականի աշնանն իրականացնում է առաջին կինոցուցադրությունը: Առաջին հանդիսատեսը շահի մերձավոր շրջապատն էր, նրա ընտանիքի անդամները, նախարարները, սպասավորները: Կինոժապավենն էլ նվիրված էր շահի գազանանոցին եւ Թեհրանում աշուրայի արարողությանը: Այսպես իրանական Ղաջարների արքայատան վերջալույսին ձեւավորվում է իրանական կինոն: Առաջին հանրային կինոցուցադրությունը եւս իրականացվում է Միրզա Իբրահիմ խանի կամ Աքաս-բաշու կողմից: Ցուցադրություններն իրականացվում են նրա ֆոտոստուդիա-խանութի ետնաբակում: Այն ժամանակ իրանական ֆիլմեր, որպես այդպիսիք, չկային: Ցուցադրվում էին արտասահմանյան կատակերգություններ կամ իրանական քրոնիկաներ: Դա 1930-ական թվականներն էր: Նաեւ չկային կինոցուցադրությունների սրահներ:

Իրավիճակը փոխվեց, երբ Իրանում հայտնվեց առաջին կինոդպրոցը: Հիմնադիրը հայազգի Հովհաննես Օհանյանն էր, որը կրթություն էր ստացել Ռուսաստանում՝ ռեժիսոր էր: Նա նկարահանում է իրանական առաջին լիամետրաժ՝ «Աբին ու Ռաբին» կինոնկարը: Մի քանի տարի անց էլ ի հայտ է գալիս առաջին հնչյունային իրանական կինոն՝ «Լուրեցի աղջիկը»: Լուրերը իրանցի ժողովուրդ են: Կինոնկարի պրոդյուսինգով զբաղվել է Բրիտանական Հնդկաստանից մի ընկերություն, իսկ ռեժիսորը ծնունդով բոմբեյցի Արդաշիչ Իրանին էր: Սա առաջին կինոնկարն էր, որտեղ հերոսները խոսում էին ֆարսի լեզվով: «Լուրեցի աղջիկը» կինոնկարում առաջին անգամ էկրանին հայտնվում է կին, եւ այն առանց գրաքննության ցուցադրվում է նաեւ մահմեդական երկրների կինոթատրոններում: Ձաֆարի եւ Գյոլնարի սիրո մասին պատմող ժապավենը՝ այն մասին, որ զույգն ի վերջո փախչում է Իրանից, ուներ նաեւ քաղաքական ենթատեքստ: Այն ցույց էր տալիս, թե ինչպիսին էին իրանական պետությունում կենսամակարդակն ու ժողովրդի բարեկեցությունը Ղաջարների եւ նրանց փոխարինած Փեհլեւիների օրոք: Պրեմիերայից հետո Ռեզա շահի կառավարությունն այս կինոնկարն օգտագործում է որպես գործիք՝ պրոպագանդելու իր «նվաճումները»: Այն դառնում է կինովարձույթում հիթային: Ահա, այսպես էլ ձեւավորվել է իրանական կինոն՝ իհարկե, ոչ առանց հայազգի գործիչների մասնակցության:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՅՆՔԱՆ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Բա չիմացաք… Ռոմանոսն ուզում է ՀԷՑ-ը հետ տալ Սամվել Կարապետյանին, բայց վերջինս չի վերցնում: Ռոմանոսի շեֆը, ճիշտ է, դեռ այդ մասին չգիտի, բայց Ռոմանոսը հույս ունի, որ իրեն կհաջողվի համոզել Սամվել Կարապետյանին եւ գործը գլուխ բերել հնարավորինս անաղմուկ, այն է՝ շեֆի համար աննկատ: Ռոմանոսին մոտ կանգնած աղբյուրները, սակայն, պնդում են, որ աշխարհում այնպիսի բան չկա, որ շեֆը չգիտի:

Ավելին, նրանք նեղ շրջանում փսփսում են, որ շեֆն անձամբ է Ռոմանոսին կարգադրել՝ ՀՀ կառավարությանն ազատել ՀԷՑ-ի գլխացավից, բայց այնպես, որ տպավորություն չստեղծվի, թե ինքը եւս այդպիսի ցանկություն ունի: Եվ հիմա պարզվում է, որ ամենամեծ խնդիրը Սամվել Կարապետյանն է, որ չի ցանկանում ՀԷՑ-ը հետ վերցնել:

Նա Ռոմանոսի մարդկանց հետ է ուղարկել, ասելով. տղամարդ տղա եմ՝ խոսքիս տերն եմ, մի անգամ ասել եմ՝ թքած ՀԷՑ-ի վրա, եւ ես իմ խոսքը հետ վերցնողը չեմ: Այ պարոն Կարապետյան ջան, արի քո ապրանքը հետ վերցրու՝ խնդրել են ռոմանոսականները:

- Չէ,- ոտքը դեմ է տվել Սամվել Կարապետյանը,- ես ձեր կառավարությանը լավ եմ ճանաչում… Թառլան հորթը տարաք, կաշին ու ոսկորները հետ եք բերել, թե՝ վերցրու… Չի լինի:

Ու, քանի որ շեֆի անունը չի հոլովվել այդ խոսակցության մեջ, Ռոմանոսը հասկացել է, որ լուրջ ք.քի մեջ է հայտնվել, իսկ ավելի ստույգ՝ բռնվել գողության մեջ: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ հոդվածների տակ կարող է ընկնել Ռոմանոսը… Ուրիշի գույքի յուրացում, բացահայտ կողոպուտ՝ ամսական 5 միլիոնից ավելի աշխատավարձի տեսքով, տգիտության արդյունքում պայթած եւ հրդեհված մի քանի ենթակայան, շարքից դուրս եկած տրանսֆորմատորներ, անլույս մնացած ահագին ժողովուրդ, հոսանքի գերածախս, չհավաքագրված վճարներ, եւ, ի լրումն այս ամենի, համակարգից մասնագետների արտահոսք, որոնց փոխարեն այսօր ՀԷՑ-ում «ճ» կլասի էլեկտրիկներն են հարցեր լուծում: Չէ, Ռոմանոսի շեֆին ծանր պատիժ չի էլ հասնի: Նրան ամենաշատը կդատեն «անզգուշության հետեւանքով ընկերությանը պատճառված նյութական վնասի» համար, իսկ այդ վնասը կհատուցի ՀՀ կառավարությունը՝ կառավարության անդամների գրպանից… Նրանք վերջերս են միլիոնավոր դրամների պարգեւավճարներ ստացել եւ, չի բացառվում, Ռոմանոսի շնորհիվ, այսինքն՝ ՀԷՑ-ի:

Մի խոսքով՝ եթե ՀՀ կառավարությանն ու Ռոմանոսին չհաջողվի մինչեւ ընտրությունները ՀԷՑ-ը վերադարձնել, նրանց շեֆը լրջագույն քարոզչական խնդիրների առջեւ է կանգնելու: Որ Հաքան Ֆիդանը Կայա Կալլասի ձեռքն էլ բռնած գա, միեւնույն է, չեն կարողանալու մեր հանրությանը համոզել, որ իրենք գող չեն… Փիլիսոփա են: Թե Ռոմանոսն իր շեֆի հետ՝ ո՞ւր, փիլիսոփայությունը՝ ուր…

Ախր, Եկեղեցու հետ կապված էլ նույն վիճակում են հայտնվել: Եթե մի քանի դասընթացով դեռ կարելի էր էլեկտրիկի մասնագիտություն ձեռք բերել, ապա ես չգիտեմ, թե ինչպես պիտի սրանք մինչեւ ընտրությունները, շատ ներողություն, «տերտերություն» սովորեն: Նախ՝ ո՞վ պիտի սովորեցնի, Կճոյա՞նը… Մեկը լինի՝ Կճոյանին տերտերություն սովորեցնի: «Բառադին» էդ տարիքում պոչը խուզեց, խառնվեց «Նիկոլոտնի» հոտին՝ անիծելով թե՛ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, թե՛ նրա հավատավոր հետեւորդների հերը: Հրեն, տասնյակներով կարգալույծ արված տերտերներ ունի ՀՀ կառավարությունը, դե թող գան ու իրենց շեֆին տերտերություն սովորեցնեն: Թուղթ են, չէ՞, ստորագրել, հանձնաժողով են, չէ՞, կազմել՝ իբր Եկեղեցու բարենորոգության: Բա ո՞ւր են, քանի՞ նիստ են արել, ե՞րբ պիտի Եկեղեցին «ազատեն» Վեհափառից: Վաղը մի հատ Ռոմանոս կգտնե՞ն, որ նշանակեն Եկեղեցու ժամանակավոր կառավարիչ: Հոգեւոր ռոմանոսները հո փողոցում թափված չե՞ն, որ մեկին բռնեն ու հընթացս նշանակեն:

Ոչինչ, այդ օրն էլ կգա, ու էդ բառադի տերտերները կգնան Գարեգին Երկրորդի ոտը, թե՝ Վեհափառ տեր, ներիր մեզ, մենք չգիտեինք՝ ինչ ենք անում, քանզի մեզ ուղղորդող ձեռքը շփոթել էինք Տիրոջ ձեռքի հետ: Եվ, պատկերացրեք, Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսը կների նրանց: Նա էլ իր խոսքի տեր մարդ է, ասել է՝ կներեմ, ուրեմն՝ կների: Խնդիրը նուրբ է այս պարագայում, թեեւ այս հարցում էլ տեղի է ունեցել ուրիշի ունեցվածքի «անզգույշ» յուրացում, որ առաջացրել է ֆինանսական լուրջ հետեւանքներ: Այդքան Եկեղեցի պղծվեց, այդքան հավատացյալ հեռացավ Եկեղեցուց, քանի՛- քանի «սմբակավոր», որ կյանքում պատարագ չէր տեսել, մուտք գործեց Աստծո տաճար եւ օդը մունդռեց, որպեսզի կանգնի հակաեկեղեցական շարժման «առաջնորդի» կողքին եւ ըմբոշխնի կաթողիկոսի անվան զեղչումը… Ու պիտի հարց դրվի այդ առաջնորդի առջեւ՝ Արցախի հազարավոր եկեղեցիներ ու վանքեր, դարավոր դպրանոցներ թողեցիր թուրքին, չհագեցմ՞ի, որդյակ իմ, որ հիմա էլ Արագածոտնի, Շիրակի, Արմավիրի, Մասյացոտնի, Արարատյան թեմերի եկեղեցիներն ես քանդում ու ավերում: Ի՞նչ ես տանելու քեզ հետ, այս վատությունից ու դատարկախոսությունից բացի, ո՞վ է դատաստանիցդ առաջ լսելու այս ողջ ճամարտակությունը, որ քեզ թույլ տվեցիր՝ ազգիդ թշնամուն հաճոյանալու համար:

ՀԳ. *Իսկ ընտրություններին մնաց 130 օր:*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 22.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

«300 ԴՊՐՈՑ ԵՎ 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԾՐԱԳՐՈՎ ԱՅՍ ՏԱՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՅՐՅԱՄ ԿՏԱՆ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը որպես իր կողմից իրականացված, հաջողված ծրագիր է ներկայացնում «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը, սակայն իրականում այդ ծրագիրը, դրանում ընդգրկված դպրոցների, մանկապարտեզների թվերի ու կրթական այդ հաստատությունների շենքերի նորոգման, կառուցման ժամկետների իրականացման առումով, արդեն կարելի է ասել, ձախողված է:

2025թ. դեկտեմբերի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով մինչ այժմ Տավուշի մարզում ո՞ր դպրոցների եւ մանկապարտեզների շենքերն են կառուցվել, նորոգվել, քանիսի՞ կառուցումը, նորոգումն ընթացքի մեջ են»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Ներկա դրությամբ վերանորոգվում են Թեղուտի միջնակարգ, Իջեւանի թիվ 4 հիմնական, Բերդավանի միջնակարգ, Տավուշի միջնակարգ, Բերդի թիվ 3 հիմնական դպրոցները: Վերանորոգման աշխատանքները կավարտվեն 2026-ին: 2026-ին կսկսվի Սարիգյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգումը: Ավարտվել է Կիրանցի հիմնական եւ Գանձաքարի միջնակարգ դպրոցների կառուցումը: Կառուցվում են Աղավնավանքի միջնակարգ, Լուսաձորի հիմնական, Սեւքարի միջնակարգ, Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական, Այրումի միջնակարգ, Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ, Պտղավանի միջնակարգ, Դովեղի միջնակարգ, Նորաշենի միջնակարգ, Նավուրի միջնակարգ դպրոցները: 2026 թվականին կսկսվի Կոթիի, Ոսկեվանի, Կողբի, Այգեձորի, Արծվաբերդի, Գոշի նոր դպրոցների կառուցումը»:

«300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագիրը, հիշեցնենք, նախատեսված է ավարտել 2026 թվականի սեպտեմբերին, սակայն այդ ծրագրով շատ դպրոցների շինարարությունը Տավուշի մարզում հիմքից կամ դրանց առաջին հարկից վերեւ դեռ չի բարձրացել, տարիներ են հարկավոր՝ այդ կրթօջախների շինարարությունն ավարտելու համար: Այս տարի ծրագիրն ավարտվում է, սակայն Կոթիի, Ոսկեվանի, Այգեձորի, Արծվաբերդի, Գոշի նոր դպրոցների շինարարությունը նախատեսված է այս տարի սկսել, բայց դեռ հարց է՝ այս տարի դրանք կսկսվե՞ն:

«300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագրով որեւէ դպրոցի գործարկում բազմիցս տարփողվում է իշխանության կողմից, բայց չեն հայտնում, թե ծրագիրն ինչքան է նախատեսված ժամկետից ուշացել: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը Ֆեյսբուքի իր էջում նշել է. «ՀՀ կառավարության «500 մանկապարտեզ, 300 դպրոց» ծրագրով հիմնանորոգվում է Հաղարծնի մանկապարտեզը»: ՔՊ-ական համայնքապետն իր հայրենի գյուղի՝ Հաղարծինի մանկապարտեզի հիմնանորոգմամբ այնքան է ոգեւորված, որ «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի անունը թարս է գրել:

2025թ. հոկտեմբերի 14-ին Տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանին տեղեկատվական հարցում եմ արել կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով կատարված աշխատանքների մասին: Ս. Բաղինյանը պատասխանել է. «Մինչեւ 2025 թվականի հոկտեմբերի 14-ը «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ ընթացքի մեջ է 121 կառուցվող, 103 վերանորոգվող դպրոցի, ինչպես նաեւ՝ 13 կառուցվող մանկապարտեզի շինարարություն: Տեղեկացնում ենք, որ 121 դպրոցից 48-ը կրթահամալիր է, որոնք ներառում են նաեւ մանկապարտեզներ: Մինչեւ 2025 թվականի հոկտեմբերի 14-ը ավարտվել է 21 կառուցված դպրոցի եւ 6 մանկապարտեզի շինարարություն»:

Թե մինչեւ 2026 թվականի սեպտեմբերի 1-ը ՀՀ-ում քանի դպրոց եւ մանկապարտեզ կառուցված, նորոգված կլինի, պարզ կդառնա 26-ի աշնանը, երբ հայտնի չէ, թե ով կլինի իշխանության: Նիկոլ Փաշինյանի իշխանությունն իր ո՞ր խոստման, ծրագրի համար է պատասխանատու եղել, որ «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի համար պատասխանատու լինի:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am